ԾՐԱԳՐԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

(2020-2022ԹԹ.)

ԵՐԵՎԱՆ 2022

Բաց Հասարակության Հիմնադրամներ Հայաստան

ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ
հակակոռուպցիոն կենտրոն

Սույն զեկույցի պատրաստումը և տպագրությունը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան կազմակերպության օժանդակության շնորհիվ (դրամաշնորհ G20103):

Զեկույցում տեղ գտած տեսակետները և վերլուծությունները արտահայտում են հեղինակի կարծիքը և կարող են չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան կազմակերպության տեսակետների և դիրքորոշումների հետ:

Ծրագրային բյուջետավորման պրակտիկան ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում (2020-2022թթ.)

Վարուժան Հոկտանյան
Ծրագրի ղեկավար

Սարգիս Նասիբյան
Հանրային ֆինանսների գծով փորձագետ

Սուսաննա Եղիազարյան
Հանրային ֆինանսների գծով փորձագետ

Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն
Սարյան 12, 5-րդ հարկ
Երևան 0002, Հայաստան
հեռ. (+374 10) 569589, 569689
Էլ. փոստ՝ info@transparency.am
Կայք էջ՝ https://transparency.am

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Ներածություն 3

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2020թ. պետական բյուջեի ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային ցուցանիշների կատարողականի վերլուծության արդյունքները 5

ԹԻՀԿ-ի առաջարկությունները ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2021-2023թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրի և 2021թ. բյուջեի նախնական նախագծի միջոցառումների և արդյունքային ցուցանիշների վերաբերյալ 12

Միջոցառումների և արդյունքի ցուցանիշների վերաբերյալ ԹԻՀԿ այն առաջարկությունները, որոնք ներառվել են 2021թ. պետական բյուջեի ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության մասում 23

2021թ. ՀՀ պետական բյուջեի ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության բյուջետային ծրագրերի՝ ԹԻՀԿ-ի կողմից առաջադրված արդյունքի չափորոշիչների տարեկան կատարողականի վերլուծություն 29

Միջոցառումների և արդյունքի ցուցանիշների վերաբերյալ ԹԻՀԿ այն առաջարկությունները, որոնք չեն ընդգրկվել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2022թ. ընդունված պետական բյուջեում և/կամ 2023թ. բյուջեի հայտում 43

Եզրակացություններ և առաջարկություններ 49

Ա. Եզրակացություններ 49

Բ. Առաջարկություններ 50

Ներածություն

2020 թվականի փետրվարի 1-ից մինչև 2022 թվականի ապրիլի 29-ը «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» (ԹԻՀԿ) հասարակական կազմակերպությունը Բաց հասարակություն հիմնադրամներ – Հայաստանի աջակցությամբ ուսումնասիրել և աջակցել է ծրագրային բյուջետավորման պրակտիկայի ներդրմանը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում: Այս ծրագիրը հանդիսանում է նախորդ նմանատիպ ծրագրի («Ծրագրային բյուջետավորման պրակտիկայի ներդրումը ՀՀ արդարադատության նախարարությունում (2019-2020թթ.)»[1]) տրամաբանական շարունակությունն՝ ավելի ընդգրկուն գործողություններով: Նախորդ ծրագրի շրջանակներում վերլուծության էին ենթարկվել ՀՀ արդարադատության նախարարության մասով 2019թ. պետական բյուջեի միջոցառումների և նրանց արդյունքի չափորոշիչները:

Նշված երկու ուսումնասիրությունները հիմնված են այն համոզմունքի վրա, որ, շնորհիվ իրական ծրագրային բյուջետավորման կունենանք հանրության և պետության նպատակներին ծառայող և միջոցներն ավելի արդյունավետ օգտագործող պետական բյուջե: Նրանց ընդհանուր նպատակը երկրի քաղաքական, տնտեսական և սոցիալական ոլորտներում լավ կառավարման խթանման մեջ ներդրում ունենալն է: Այս նպատակին հասնելու համար ներկա ծրագրի իրականացման արդյունքում.

- Ծրագրի փորձագետների կողմից ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության մի շարք վարչություններին տրամադրվել է փորձագիտական աջակցություն՝ նախարարության բյուջետային հայտում ներառելու մի շարք արդյունավետ, իրատեսական և շահառուների համար ընդունելի միջոցառումներ և դրանց արդյունքի չափորոշիչներ:
- Իրականացվեցին ջատագովության որոշ քայլեր՝ ընդգրկելու վերը նշված միջոցառումները և արդյունքի չափորոշիչները 2021 թվականի պետական բյուջեում: Մասնավորապես, ԹԻՀԿ-ն այն ժամանակ գործող ԱԺ առողջապահության, աշխատանքի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահին[2] ուղարկեց իր այն առաջարկությունները, որոնք չներառվեցին կառավարության կողմից 2020թ. հոկտեմբերի սկզբին ԱԺ ուղարկված 2021թ. պետական բյուջեի նախագծում: Այդ չներառված առաջարկությունների մի մասը տեղ գտավ ԱԺ-ի կողմից վերջնականորեն ընդունված (2020թ. դեկտեմբերի 10-ին) 2021 թվականի պետական բյուջեում:
- Վերլուծության ենթարկվեցին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության բյուջեի 2021թ. կատարման տարեկան հաշվետվության նախագիծը[3], 2022թ. ընդունված բյուջեն[4] և նույն նախարարության 2023թ. բյուջեի հայտի նախագիծը[5]:

---

[1] Ծրագրի արդյունքները ներկայացված և վերլուծված են համանուն հրապարակման մեջ – տե՛ս https://transparency.am/hy/publication/pdf/208/1308

[2] 2021թ. հունիսի 20-ի խորհրդարանական արտահերթ ընտրությունների արդյունքում ձևավորված ԱԺ-ում նշված մշտական հանձնաժողովի հիմքի վրա ստեղծվեց երկու նոր մշտական հանձնաժողով՝ առողջապահության, և աշխատանքի և սոցիալական հարցերի հանձնաժողովները:

[3] https://minfin.am/hy/page/petakan_byujei_hashvetvutyun_2021_t_tarekan

[4] http://parliament.am/legislation.php?sel=show&ID=7850&lang=arm

[5] https://www.mlsa.am/?page_id=4945

Վերլուծության նպատակն էր, նախ պարզել, թե ինչ խնդիրներ և թերություններ են առկա արդյունքի չափորոշիչներում, ներառյալ ԹԻՀԿ-ի կողմից առաջարկված չափորոշիչներում, 2021թ. բյուջեի կատարման ընթացքում, ինչպես նաև պարզել, թե ԹԻՀԿ-ի առաջարկած որ միջոցառումները և դրանց արդյունքի չափորոշիչներ, որոնք առկա էին 2021թ. բյուջեում, տեղ էին գտել նաև 2022թ. ընդունված բյուջեում և 2023թ, բյուջեի հայտի նախագծում:

Հարկ է նշել, որ, նախ, կորոնավիրուսի համավարակի պատճառով, որը Հայաստանում սկսվեց 2020թ. մարտի 1-ից, իսկ այնուհետև նույն տարվա սեպտեմբերի 27-ից սկսված արցախյան 44-օրյա պատերազմի պատճառով նախանշված ջատագովության ծրագիրը հնարավոր չեղավ իրականացնել: Կորոնավիրուսի համավարակի կապակցությամբ 2020թ. մարտի 16-ից (մինչև նույն թվականի սեպտեմբերի 11-ը) հայտարարված արտակարգ դրությունը, որի չեղյալ հայտարարելուց հետո դրանից 16 օր անց սեպտեմբերի 27-ին պատերազմի կապակցությամբ հայտարարված ռազմական դրությունը պրակտիկորեն անհնարին դարձրին արդյունավետ կերպով ջատագովել ԹԻՀԿ-ի վերը նշված առաջարկությունները անհատական որոշումներ կայացնողների և այլ շահառուների հետ հանդիպումների, ինչպես նաև մամլո ասուլիսների միջոցով: Բացի այդ, ջատագովություն իրականացնելն ինչ-որ չափով կորցրեց իր իմաստը, քանի որ նշված երկու ճգնաժամերը (կորոնավիրուսի համաճարակ և պատերազմ) պահանջեցին արմատապես վերանայելու պետական մարմինների, ներառյալ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, բյուջետային հայտերը, որոնք, ելնելով ՀՀ վարչապետի Հայաստանի Հանրապետության 2021 թվականի բյուջետային գործընթացն սկսելու մասին 2020թ. հունվարի 9-ի N 5-Ա որոշումից, պետք է պատրաստ լինեին (և այդ վերջնաժամկետը պահպանվեց) մինչև 2020թ. մարտի 16-ը, այսինքն մինչև կորոնավիրուսի համաճարակի կապակցությամբ հայտարարված արտակարգ դրություն մտցնելու օրը: Միևնույն ժամանակ, ինչպես արդեն նշվեց, ԹԻՀԿ-ը նախարարության հետ համագործակցել էր հենց նախարարության բյուջետային հայտի մշակման շուրջը, այսինքն այդ համագործակցության արդյունքում ծնված առաջարկությունները մշակվեցին մինչև վերը նշված 2020թ. մարտի 16-ի վերջնաժամկետը:

Ելնելով վերը նկարագրված իրավիճակից, ինչպես նաև 2020թ. դեկտեմբեր – 2021թ. հունվար ամիսներին հանրապետությունում ստեղծված բարդ ներքաղաքական իրավիճակից, որը, փաստացիորեն թույլ չտվեց ավարտել այս ծրագիրը նախանշված ժամկետում (2021թ. հունվարի 31-ին), ԹԻՀԿ-ը որոշեց շարունակել ծրագիրը՝ իրականացնելու համար վերը նշված 2021թ. կատարման տարեկան հաշվետվության նախագծի, 2022թ. ընդունված բյուջեի և նույն նախարարության 2023թ. բյուջեի հայտի նախագծի վերլուծությունները:

Սույն հրապարակման մեջ ներկայացված են ՀՀ աշխատաանքի և սոցիալական հարցերի նախարարության մասով 2021թ. պետական բյուջեի նախագծում ներառված միջոցառումների և նրանց արդյունքի չափորոշիչների վերլուծությունը, այդ վերլուծության արդյունքում մշակված ԹԻՀԿ-ի առաջարկությունները, ինչպես նաև արդեն ընդունված բյուջեում այդ առաջարկությունների առկայությունը կամ բացակայությունը: Բացի դրանից, ներկայացված են նախարարության մասով 2021թ. կատարման տարեկան հաշվետվության

նախագծի, 2022թ. ընդունված բյուջեի և նախարարության 2023թ. բյուջեի հայտի նախագծի վերլուծությունները՝ իջոցառումների և նրանց արդյունքի չափորոշիչների համատեքստում:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2020թ. պետական բյուջեի ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային ցուցանիշների կատարողականի վերլուծության արդյունքները

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2020թ. կատարողական հաշվետվության ուսումնասիրության և վերլուծության արդյունքների հիման վրա կարելի է փաստել, որ բյուջետային ծրագրերի և միջոցառումների արդյունքային ցուցանիշները հնարավորություն չեն տալիս բավարար պատկերացում կազմել տվյալ միջոցառման որակի և արդյունավետության վերաբերյալ: Միաժամանակ, անհրաժեշտ է հաշվի առնել նաև կորոնայի համաճարակի առկայությունը, որի բացասական ազդեցությունը բյուջետային ծրագրերի և միջոցառումների կատարման վրա անխուսափելի է: Հաշվետվության ուսումնասիրության ընթացքում միջոցառումների մակարդակում արդյունքային ցուցանիշների մասով բացահայտվել են հետևյալ անճշտությունները և թերությունները ամփոփ տեսքով՝

- Որոշ միջոցառումներում ընդհանրապես բացակայում են միջոցառումը բնութագրող արդյունքի չափորոշիչները, ինչը որևէ հնարավորություն չի տալիս գնահատել դրանք
- Որոշ միջոցառումներում բացակայում են արդյունքի չափորոշիչների թվային արժեքով սահմանված ցուցանիշները, ինչը հնարավորություն չի տալիս պատկերացում կազմել միջոցառման շահառուների ընդգրկվածության և ծավալների վերաբերյալ
- Որոշ միջոցառումներում բացակայում է արդյունքի չափորոշիչների փաստացի կատարողականը
- Միջոցառումներոմներից մեծ մասում բացակայում են այն հիմնական որակական ցուցանիշները որոնց շնորհիվ հնարավոր է գնահատել միջոցառման որակը և արդյունավետությունը:
- Որոշ միջոցառումներում ներկայացված է սահմանված չափանիշներին համապատասխանությունը գնահատող որակական չափորոշիչներ, սակայն դրանք որևէ օգտակար տեղեկատվություն չեն պարունակում, քանի որ և պլանային, և փաստացի կատարման վերաբերյալ ցուցանիշը կազմում է 100%, ինչը ընդունելի է պլանային ցուցանիշներ սահմանելու դեպքում: Հասկանալի չէ ինչպես է հաշվարկվում կամ գնահատվում տվյալ ծառայությանը վերաբերող ստանդարտների փաստացի պահպանումը:: Այն չափելու համար անհրաժեշտ է սահմանել որակի ապահովման համապատասխան գործընթացներ:
- Ընդհանուր առմամբ բոլոր որակական արդյունքի չափորոշիչների համար անհրաժեշտ է մշակել չափորոշիչների թվաին արժեքների հաշվարկման կամ գնահատման մեթոդաբանություն, հնրավորություն տալով դրանք դարձնել համեմատելի և հիմնավորված:

Ստորև ներկայացված են կոնկրետ ծրագրերի համապատասխան միջոցառումներում վերը նշված թերությունների առկայությունը.

1. **Արդյունքի չափորոշիչների բացակայություն**

- Ծրագիր 1011 **Անապահով սոցիալական խմբերին աջակցություն**

Միջոցառում 11002 **Համայնքային ենթակայության սոցիալական ծառայությունների կողմից սոցիալական աջակցության քաղաքականության իրականացման ապահովում**

- Ծրագիր 1117 **Սոցիալական պաշտպանության բնագավառում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիթորինգ**

Միջոցառում 11001 **Սոցիալական պաշտպանության բնագավառի պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիթորինգի ծառայություններ**

Միջոցառում 11005 **Արտասահմանյան պաշտոնական գործուղումներ**

Միջոցառում 11006 **ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից դիմումներ, հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված վճարումներ**

- Ծրագիր 1205 **Սոցիալական ապահովություն**

Միջոցառում 12017 **Ռազմական դրությամբ պայմանավորված՝ ՀՀ պետական բյուջեից Արցախի քաղաքացիներին հատկացվող դրամական աջակցությունների գումարները Արցախում տրամադրման ապահովում**

2. **Արդյունքի չափորոշիչների թվային արժեքով սահմանված ցուցանիշների բացակայություն**

- Ծրագիր 1011 **Անապահով սոցիալական խմբերին աջակցություն**

Միջոցառում 11005 **Սոցիալական շտապ օգնություն**

- Ծրագիր 1141 **Ընտանիքներին, կանանց և երեխաներին աջակցություն**

Միջոցառում 11010 **Թրաֆիքինգի և շահագործման, սեռական բռնության ենթարկված անձանց պաշտպանություն և նրանց մատչելի, բազմակողմանի ու օպերատիվ աջակցության կազմակերպում, թվով երկու չափորոշիչ**

Միջոցառում 11016 **Ընտանեկան բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոնների ծառայություններ, մեկ չափորոշիչ**

- Ծրագիր 1160 **Հաշմանդամություն ունեցող անձանց աջակցություն**

Միջոցառում 11001 **Հաշմանդամություն ունեցող անձանց աջակցող միջոցների վերանորոգում՝ երկու չափորոշիչ**

Միջոցառում 12001 **Պետական հավաստագրերով աջակցող միջոցների տրամադրում՝ չորս չափորոշիչ**

- Ծրագիր 1205 **Սոցիալական ապահովություն**

Միջոցառում 12004 **Աջակցություն հաշմանդամ դարձած զինծառայողներին և զոհվածների ընտանիքներին**

Միջոցառում 12005 **Աջակցություն զոհվածների ընտանիքներին**

Միջոցառում 12012 **ՀՀ ՊՆ զինվորական կոչում ունեցող անձնակազմին սոցիալական աջակցություն**

3. **Լրացված չէ արդյունքային ցուցանիշների փաստացի կատարողականը**

- Ծրագիր 1011 **Անապահով սոցիալական խմբերին աջակցություն**

Միջոցառում 11003 **Սոցիալական դեպքի վարման ծառայության ձեռք բերում**

- Ծրագիր 1088 **Զբաղվածության ծրագիր**

Միջոցառում 11002 **Աշխատանքի տոնավաճառի կազմակերպում**

- Ծրագիր 1160 **Հաշմանդամություն ունեցող անձանց աջակցություն**

Միջոցառում 11001 **Հաշմանդամություն ունեցող անձանց աջակցող միջոցների վերանորոգում ՝ երկու չափորոշիչ**

Միջոցառում 12001 **Պետական հավաստագրերով աջակցող միջոցների տրամադրում՝ չորս չափորոշիչ**

- Ծրագիր 1184 **Ավանդների և այլ փոխհատուցումներ**

Միջոցառում 12002 **Անավարտ շինարարության բնակարանաշինարարական կոոպերատիվների փայատերերի կողմից Խորհրդային Միության ռուբլով վճարված գումարի արժեզրկումից փայատերերի կրած կորուստների դիմաց դրամական օգնության տրամադրում**

- Ծրագիր 1205 **Սոցիալական ապահովություն**

Միջոցառում 12004 **Աջակցություն հաշմանդամ դարձած զինծառայողներին և զոհվածների ընտանիքներին**

Միջոցառում 12005 **Աջակցություն զոհվածների ընտանիքներին**

Միջոցառում 12007 **ՀՀ ՊՆ, ՀՀ ԿԱ ԱԱԾ կրտսեր, միջին, ավագ և ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանության միջին, ավագ, գլխավոր սպայական անձնակազմին սոցիալական աջակցություն**

Միջոցառում 12012. **ՀՀ ՊՆ զինվորական կոչում ունեցող անձնակազմին սոցիալական աջակցություն**

4. **Սահմանված չափանիշներին համապատասխանությունը գնահատող որակական չափորոշիչներ, որոնց պլանային, և փաստացի կատարման վերաբերյալ ցուցանիշը կազմում է 100%**

- Ծրագիր 1032. **Խնամքի ծառայություններ 18 տարեկանից բարձր տարիքի անձանց**

Միջոցառում 11001. **Տարեցների և հաշմանդամություն ունեցող 18 տարին լրացած անձանց շուրջօրյա խնամքի ծառայություններ**

- ✓ *Տարեցների և հաշմանդամություն ունեցող 18 տարին լրացած անձանց տրամադրվող սննդամթերքի չափաքանակների և էներգետիկ արժեքի համապատասխանությունը սահմանված նվազագույն չափորոշիչներին (մոնիտորինգի և գնահատման արդյունքներ), տոկոս*

Միջոցառում 11002. **Տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ**

- ✓ *Տնային պայմաններում տարեցների և հաշմանդամների խնամքի տրամադրման և սոցիալական սպասարկման համապատասխանությունը սահմանված նվազագույն չափորոշիչներին (մոնիտորինգի և գնահատման արդյունքներ), տոկոս*

Միջոցառում 11003. **Տարեցներին, հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի ծառայություններ**

- ✓ *Խնամքի ցերեկային խնամքի կենտրոններում տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրվող սննդամթերքի համապատասխանությունը սահմանված չափանիշներին (մոնիտորինգի և գնահատման արդյունքներ), տոկոս*

Միջոցառում 11004. **Տարեցների շուրջօրյա խնամքի ծառայություններ**

- ✓ *Տարեցների և հաշմանդամություն ունեցող 18 տարին լրացած անձանց տրամադրվող սննդամթերքի չափաքանակների և էներգետիկ արժեքի համապատասխանությունը սահմանված նվազագույն չափորոշիչներին (մոնիտորինգի և գնահատման արդյունքներ), տոկոս*
- ✓ *Տարեցների և հաշմանդամների տուն-ինտերնատի գործունեության համար անհրաժեշտ ընդհանուր և բնակելի տարածքի համապատասխանությունը սահմանված խնամքի և սպասարկման նվազագույն չափորոշիչներին (մոնիտորինգի և գնահատման արդյունքներ), տոկոս*
- ✓ *Տարեցների և հաշմանդամություն ունեցող 18 տարին լրացած անձանց տրամադրվող հագուստի և անկողնային պարագաների ապահովման համապատասխանությունը սահմանված խնամքի և սպասարկման նվազագույն չափորոշիչներին, (մոնիտորինգի և գնահատման արդյունքներ), տոկոս*

Միջոցառում 11005. **Անօթևան մարդկանց համար ժամանակավոր օթևանի տրամադրման ծառայություններ**

- ✓ *Անօթևան մարդկանց ժամանակավոր կացարանում տրամադրվող խորհրդատվական, սոցիալ-հոգեբանական, առաջնային բժշկական և բնաիրային օգնության (սննդի, հիգիենայի միջոցների, հագուստի, կոշիկի) տրամադրման ծառայությունների համապատասխանությունը սահմանված չափանիշներին, տոկոս*

Միջոցառում 11008. **Մտավոր խնդիրներ ունեցող անձանց շուրջօրյա խնամքի ծառայություններ**

- ✓ *Մտավոր խնդիրներ ունեցող 18 տարին լրացած անձանց տրամադրվող սննդամթերքի չափաքանակների և էներգետիկ արժեքի համապատասխանությունը սահմանված նվազագույն չափորոշիչներին (մոնիտորինգի և գնահատման արդյունքներ), տոկոս*
- ✓ *Մտավոր խնդիրներ ունեցող 18 տարին լրացած անձանց բնակության համար անհրաժեշտ ընդհանուր և բնակելի տարածքի համապատասխանությունը սահմանված խնամքի և սպասարկման նվազագույն չափորոշիչներին (մոնիտորինգի և գնահատման արդյունքներ), տոկոս*
- ✓ *Մտավոր խնդիրներ ունեցող 18 տարին լրացած անձանց տրամադրվող հագուստի և անկողնային պարագաների ապահովման համապատասխանությունը սահմանված խնամքի և սպասարկման նվազագույն չափորոշիչներին (մոնիտորինգի և գնահատման արդյունքներ), տոկոս*

Միջոցառում 11009. **Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց շուրջօրյա խնամքի ծառայություններ**

- ✓ *Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող 18 տարին լրացած անձանց տրամադրվող սննդամթերքի չափաքանակների և էներգետիկ արժեքի համապատասխանությունը սահմանված նվազագույն չափորոշիչներին (մոնիտորինգի և գնահատման արդյունքներ), տոկոս*
- ✓ *Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող 18 տարին լրացած անձանց խնամքի տան գործունեության համար անհրաժեշտ ընդհանուր և բնակելի տարածքի համապատասխանությունը սահմանված խնամքի և սպասարկման նվազագույն չափորոշիչներին (մոնիտորինգի և գնահատման արդյունքներ), տոկոս*
- ✓ *Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող 18 տարին լրացած անձանց տրամադրվող հագուստի և անկողնային պարագաների ապահովման համապատասխանությունը սահմանված խնամքի և սպասարկման նվազագույն չափորոշիչներին (մոնիտորինգի և գնահատման արդյունքներ), տոկոս*

- **Ծրագիր 1141. Ընտանիքներին, կանանց և երեխաներին աջակցություն**

Միջոցառում 11001 **Երեխաների շուրջօրյա խնամքի ծառայություններ**

- ✓ *Երեխաների՝ սոցիալական զարգացման անհատական ծրագրերով ապահովվածությունը, տոկոս*

Միջոցառում 11005 **Երեխաների գիշերօթիկ խնամքի ծառայություններ**

- ✓ *Երեխաների սոցիալական զարգացման անհատական ծրագրերով ապահովվածությունը, տոկոս*

Միջոցառում 11007 ***Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին ժամանակավոր խնամքի տրամադրման ծառայություններ***

- ✓ *Երեխաների սոցիալական զարգացման անհատական ծրագրերով ապահովվածությունը, տոկոս*

Միջոցառում 11009. **Երեխաների և ընտանիքների աջակցության տրամադրման ծառայություններ**

- ✓ *Երեխաների խնամքի շուրջօրյա հաստատություններ մուտքը կանխարգելված երեխաները, ցերեկային խնամքի հաստատության երեխների թվաքանակում, տոկոս*

Միջոցառում 11015. **Ընտանիքում բռնության ենթարկված անձանց ապաստարանի ծառայություններ**

- ✓ *Ծառայություններ տրամադրող մասնագետների համապատասխանությունը մասնագիտությանը և կատարված աշխատանքին /տոկոս/*
- ✓ *Վերապատրաստում անցած մասնագետներ /տոկոս/*

Միջոցառում 11018. **Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում**

- ✓ *Երեխաների սոցիալական զարգացման անհատական ծրագրերով ապահովվածությունը, տոկոս*
- ✓ *Վերապատրաստում անցած մասնագետներ, տոկոս*

5. **Կորոնավիրուսի համաճարակի հետևանքով չիրականացված միջոցառումներ**

- **Ծրագիր 1005 Պարգևավճարներ և պատվովճարներ**

Միջոցառում 11002 **Հայրենական մեծ պատերազմի վետերաններին առողջարանային բուժման ուղեգրերի տրամադրում - չի իրականացվել դիմումների բացակայության հետևանքով**

- **Ծրագիր 1011 Անապահով սոցիալական խմբերին աջակցություն**

Միջոցառում 11003 **Սոցիալական դեպքի վարման ծառայության ձեռք բերում - չի իրականացվել տուն այցերի դադարեցման պատճառով**

- **Ծրագիր 1032 Խնամքի ծառայություններ 18 տարեկանից բարձր տարիքի անձանց**

Միջոցառում 31003 **18 տարեկանից բարձր տարիքի անձանց համայնքային փոքր տներում խնամքի կազմակերպման համար անշարժ գույքի ձեռքբերում**

- **Ծրագիր 1088 Զբաղվածության ծրագիր**

Միջոցառում 11002 **Աշխատանքի տոնավաճառի կազմակերպում**

- **Ծրագիր 1117 Սոցիալական պաշտպանության բնագավառում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիթորինգ**

Միջոցառում11003 **Հանրային իրազեկման միջոցառումների իրականացում**

Այլ դիտարկումներ

- **Ծրագիր 1088. Զբաղվածության ծրագիր**

Միջոցառում 11002. **Աշխաանքի տոնավաճառի կազմակերպում**

Միջոցառման չափորոշիչներից մեկը՝ «***Աշխատանքի տոնավաճառների կազմակերպման ամսական հաճախականությունը, անգամ***» հաշվետու ժամանակաշրջանի պլանով դեռևս առաջին եռամսյակից նախատեսվել էր ամսական մեկ անգամ կազմակերպել նման տոնավաճառ, սակայն առաջին եռամսյակի ընթացքում ընդհանրապես տոնավաճառ չի իրականացվել: Առաջին կիսամյակի ընթացքում տվյալ ցուցանիշը մնացել է նույնը սակայն նույնպես չի իրականացվել արտակարգ դրության հետևանքով, ուստի չափորոշիչը հստակեցնան և վերանայման կարիք ունի:

Միջոցառում 11007. **Հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողների համար դասընթացների կազմակերպում միջոցառում**

Նշված է ցուցանիշ «շահառուների թիվ» տարեկաան պլանը 30 մարդ է, իսկ ծառայությունների միջին տևողությունը նշված է 2 ամիս: Սակայն հաշվետու ժամանակահատվածում պլանը և փաստը նշված է նույնպես 30 մարդ , այսինք ամբողջությամբ կատարված տարեկան պլանը:

Միջոցառում 12001. **Աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցության տրամադրում**

Նշված է արդյունքային ցուցանիշ՝ «***Ինքնազբաղվածությամբ ապահովված անձանց հարաբերակցությունը միջոցառման մեջ ընդգրկված անձանց թվաքանակում, %***», որի պլանային և փաստացի ցուցանիշները 100% է, որը անհասկանալի ցուցանիշ է և չի բնութագրում տվյալ միջոցաառման արդյունավետությունը:

ԹԻՀԿ-ի առաջարկությունները ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2021-2023թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրի և 2021թ. բյուջեի նախնական նախագծի միջոցառումների և արդյունքային ցուցանիշների վերաբերյալ

- ***Ծրագիր 1011. Անապահով սոցիալական խմբերին աջակցություն***

Միջոցառում 11005. **Սոցիալական շտապ օգնություն**

Ավելացնել հետևյալ չափորոշիչները

- *Աշխատակիցների թիվը, մարդ*
- *ՀԿ-ների և բարեգործական կազմակերպությունների թիվը. հատ*
- *Իրականացվող ծրագրերի թիվը, հատ*
- *Որոշակի սոցիալական կարգավիճակ կամ գնահատված սոցիալական կարիք ունեցող ընտանիքների ընդգրկվածությունը, տոկոս*

Միջոցառում 12001. **Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ**

Ավելացնել հետևյալ չափորոշիչները

- ✓ *Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ ստացող ընտանիքների թիվ,* * *հատ, այդ թվում՝*
    - *Ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների թիվ, հատ*
    - *Սոցիալական նպաստ ստացող ընտանիքների թիվ, հատ*
    - *Ընտանիքի կայուն եկամտի ձևավորման դրամագլուխ ստացող ընտանիքների թիվ, հատ*
- ✓ *Եկամուտների աճ ունեցող ընտանիքների տեսակարար կշիռը ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ ստացող ընտանիքների թվում*
- ✓ *Ծայրահեղ աղքատ համարվող ընտանիքների տեսակարար կշիռը անապահով ճանաչված ընտանիքների թվում, տոկոս*

- ***Ծրագիր 1032. Խնամքի ծառայություններ 18 տարեկանից բարձր տարիքի անձանց***

Միջոցառում 11003. **Տարեցներին, հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի ծառայություններ**

Ավելացնել հետևյալ չափորոշիչները

- ✓ *ՀՀ մարզերի թիվ, որտեղ մատուցվում են ցերեկային խնամքի ծառայություններ, հատ*
- ✓ *Պետական վկայագրերի միջոցով ցերեկային խնամքի կենտրոններում*

սպասարկվող անձանց (խնամվողների) թիվ, մարդ

- ✓ *Ցերեկային խնամքի ծառայությունների մատուցման ծածկույթը ՀՀ տարածքում, տոկոս*
- ✓ *Ցերեկային խնամքի ծառայությունների ստացողների թիվը նման ծառայությունների կարիք ունեցող անձանց ընդհանուր թվում, տոկոս*

Միջոցառում 11004. **Տարեցների շուրջօրյա խնամքի ծառայություններ**

Ավելացնել հետևյալ չափորոշիչը

- ✓ *Տարեցների և հաշմանդամություն ունեցող 18 տարին լրացած անձանց տրամադրվող հագուստի և անկողնային պարագաների ապահովման համապատասխանությունը սահմանված խնամքի և սպասարկման նվազագույն չափորոշիչներին, (մոնիտորինգի և գնահատման արդյունքներ), տոկոս*

Միջոցառում 11005. **Անօթևան մարդկանց համար ժամանակավոր օթևանի տրամադրման ծառայություններ**

Շարադրել միջոցառման նկարագրությունը. «**Անօթևան մարդկանց ժամանակավոր կացարանով, կենսաապահովման համար անհրաժեշտ այլ պայմաններով, սոցիալ-հոգեբանական օգնությամբ, առաջնային բժշկական օգնությամբ և խորհրդատվությամբապահովում**» խմբագրությամբ:

Շարադրել «***Անօթևան մարդկանց ժամանակավոր կացարանում տրամադրվող խորհրդատվական, սոցիալ-հոգեբանական, առաջնային բժշկական և բնաիրային օգնության (սննդի, հիգիենայի միջոցների, հագուստի, կոշիկի) տրամադրման ծառայությունների համապատասխանությունը սահմանված չափանիշներին, տոկոս***» արդյունքի չափորոշիչը «***Անօթևան մարդկանց ժամանակավոր կացարանում տրամադրվող ծառայությունների համապատասխանությունը սահմանված չափանիշներին, տոկոս***» խմբարգրությամբ:

Ավելացնել հետևյալ չափորոշիչները

- ✓ *Ժամանակավոր կացարանում խնամվող անձանց թիվը օթևանի կարիք ունեցող անձանց ընդհանուր թվում, տոկոս*
- ✓ *Ժամանակավոր կացարանում խնամվող անձանց գոհունակության աստիճանը ստացված ծառայություններից, տոկոս:*

Միջոցառում 11007. **Սոցիալական բնակարանային ֆոնդի սպասարկման ծառայությունների տրամադրում**

Ավելացնել հետևյալ չափորոշիչները

- ✓ *Սոցիալական բնակարանային ֆոնդում ներառված կառույցներում բնակվող անձանց (ընտանիքների) թիվը սոցիալական բնակարանի կարիք ունեցող անձանց (ընտանիքների) թվում, տոկոս*
- ✓ *Բնակիչներին տրամադրված սոցիալական ծառայությունների համապատասխանությունը իրենց սոցիալական կարիքներին, տոկոս*
- ✓ *Սոցիալական բնակարաններում բնակվողների գոհունակության աստիճանը ստացված ծառայություններից, տոկոս:*

Միջոցառում 11010. **Հատուկ խմբերին դասված որոշակի կատեգորիայի անձանց կացարանով ապահովման ծառայություններ**

Շարադրել միջոցառման նկարագրությունը «**Հատուկ խմբերին դասված որոշակի կատեգորիայի անձանց կահավորված կացարանով ապահովում և առաջնային բժշկական օգնության տրամադրում**» խմբագրությամբ:

Ավելացնել հետևյալ չափորոշիչները

- ✓ *Սպասարկվող անձանց թիվը կացարանի կարիք ունեցող անձանց թվում, տոկոս*
- ✓ *Կացարանի բնակիչներին տրամադրված ծառայությունների համապատասխանությունը իրենց սոցիալական կարիքներին, տոկոս*
- ✓ *Կացարանում բնակվողների գոհունակության աստիճանը ստացված ծառայություններից, տոկոս:*

- ***Ծրագիր 1068. Ժողովրդագրական իրավիճակի բարելավման ծրագիր***

Միջոցառում 12001**. Մինչև 2 տարեկան երեխայի նպաստ**

Ավելացնել հետևյալ չափորոշիչը

- ✓ *Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ ստացող ստացող քաղաքացիների թիվ, մարդ, այդ թվում՝*
  - *մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող ծնող, մարդ*
  - *գյուղական բնակավայրերում բնակվող վարձու աշխատող չհանդիսացող մայրեր, մարդ*

Միջոցառում 12003. **Երիտասարդ և երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովման աջակցություն**

Միջոցառման չափորոշիչները ձևակերպել հետևյալ խմբագրությամբ՝

- ✓ *Մարզային բնակավայրերում բնակարան ձեռք բերելու համար միանվագ*

դրամական աջակցություն ստացած շահառուների թիվ, ընտանիք

- ✓ *Բնակարան ձեռք բերելու համար կանխավճարի ապահովագրություն ստացած շահառուների թիվ, ընտանիք*
- ✓ *Երեխայի ծննդով պայմանավորված՝ հիփոթեքային վարկի մարման համար դրամական աջակցություն ստացած շահառուների թիվ, ընտանիք*

- ***Ծրագիր 1082. Սոցիալական աջակցություն անաշխատունակության դեպքում***

Միջոցառում 12002. **Ժամանակավոր անաշխատունակության դեպքում նպաստ**

Միջոցառման անվանումը փոխել Հավելված 3-ի մաս 2-ում ներկայացված՝ «**Մայրության նպաստ**» անվանմամբ:

- ***Ծրագիր 1088. Զբաղվածության ծրագիր***

Միջոցառում 11001. **Գործազուրկների՝ աշխատանքից ազատման ռիսկ ունեցող, ինչպես նաև ազատազրկման ձևով պատիժը կրելու ավարտին վեց ամիս մնացած աշխատանք փնտրող անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպում**

- «Հաշմանդամություն ունեցող անձանց թիվ, մարդ չափորոշիչը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «**Մասնագիտական ուսուցում անցած հաշմանդամություն ունեցող անձանց թիվ, մարդ**»

Ավելացնել հետևյալ չափորոշիչները

- ✓ *Մասնագիտական ուսուցման ծրագրերի համապատասխանությունն աշխատաշուկայում պահանջարկ ունեցող աշխատատեղերին, տոկոս*
- ✓ *Շահառուների գոհունակության մակարդակը, տոկոս*
- ✓ *Շահառուների թիվն ըստ սեռային տարանջատման*

Միջոցառում 11002. Աշխատանքի տոնավաճառի կազմակերպում

Ավելացնել հետևյալ չափորոշիչները

- ✓ *Աշխատանքի տոնավաճառների արդյունքում աշխատանքի տեղավորված անձանց թիվ, մարդ*
- ✓ *Աշխատանքի տոնավաճառի արդյունքում աշխատանքի տեղավորված անձանց թիվը տոնավաճառի աշխատանք փնտրող այցելուների ընդհանուր թվում, տոկոս*

Միջոցառում 11004. **Աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցության տրամադրում ծրագրի ուսուցման կազմակերպման և խորհրդատվական ծառայություններ**

- ✓ «***Հաշմանդամություն ունեցող անձանց թիվ, մարդ***» չափորոշիչը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «***Ուսուցում անցած հաշմանդամություն ունեցող անձանց թիվ, մարդ***»

Ավելացնել հետևյալ չափորոշիչները

- ✓ *Ուսուցում անցնելուց հետո ձեռնարկատիրական գործունեություն սկսած շահառուների թիվը ուսուցում անցած շահառուների ընդհանուր թվում, տոկոս*
- ✓ *Շահառուների գոհունակության մակարդակը, տոկոս*
- ✓ *Շահառուների թիվն ըստ սեռային տարանջատման*

Միջոցառում 11006. **Վարձատրվող հասարակական աշխատանքների իրականացման ապահովում**

Ավելացնել հետևյալ չափորոշիչները

- ✓ *Հասարակական աշխատանքների ծրագրերում ընդգրկված գործազուրկների թիվ, մարդ, այդ թվում՝*
  կին
  տղամարդ
- ✓ *Վարձատրվող հասարակական աշխատանքների ծրագրերում ընդգրկված գործազուրկների գոհունակության մակարդակ, տոկոս*

Միջոցառում 11007. **Հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողների համար դասընթացների կազմակերպում**

Ավելացնել հետևյալ չափորոշիչները

- ✓ *Ուսուցում անցնելուց հետո աշխատանքի տեղավորված շահառուների թիվը ուսուցում անցած շահառուների ընդհանուր թվում, տոկոս*
- ✓ *Շահառուների գոհունակության մակարդակը, տոկոս*

Միջոցառում 12001. **Աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցության տրամադրում**

Ավելացնել հետևյալ չափորոշիչները

- ✓ *Աջակցություն ստացած շահառուների թիվը աջակցություն ստանալու համար դիմած չափանիշներին համապատասխանող անձանց թվում, տոկոս*
- ✓ *Շահառուների գոհունակության մակարդակը, տոկոս*
- ✓ *Ինքնազբաղվածությամբ ապահովված անձանց թիվն ըստ սեռային տարանջատման*

Միջոցառում 12002. **Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին աշխատավարձի մասնակի փոխհատուցում և հաշմանդամություն ունեցող անձին ուղեկցողի համար դրամական օգնության տրամադրում**

Ավելացնել հետևյալ չափորոշիչը

- ✓ *Շահառուների թիվն ըստ սեռային տարանջատման*

Միջոցառում 12003. **Գործազուրկին այլ վայրում աշխատանքի տեղավորման աջակցության տրամադրում**

Ավելացնել հետևյալ չափորոշիչը

- ✓ *Շահառուների թիվն ըստ սեռային տարանջատման*

Միջոցառում 12004. **Ձեռք բերած մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու համար գործազուրկներին աջակցության տրամադրում**

Միջոցառման չափորոշիչները ձևակերպել հետևյալ խմբագրությամբ՝

- ✓ *Գործատուի մոտ աշխատանքային պրակտիկա անցած գործազուրկների թիվ, մարդ, այդ թվում՝*
  կին
  տղամարդ
- ✓ *Աշխատանքային պրակտիկա անցած հաշմանդամություն ունեցող անձանց թիվ, մարդ*

Ավելացնել հետևյալ չափորոշիչները

- ✓ *Աշխատանքային պրակտիկայի միջին տևողությունը, ամիս*
- ✓ *Շահառուների գոհունակության մակարդակը, տոկոս*
- ✓ *Շահառուների թիվն ըստ սեռային տարանջատման*

Միջոցառում 12005. **Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին միանվագ փոխհատուցման տրամադրում**

Ճշգրտման կարիք ունի ըստ կին և տղամարդ տարանջատումը որ չափորոշիչին է վերաբերում, քանի որ «***Աշխատաշուկայում անմրցունակ անձանց թիվը, որոնք գործատուի մոտ աշխատանքային ունակություններ և կարողություններ են ձեռքբերում***» չափորոշիչի ոչ ֆինանսական արժեքը ոչ մի հաշվարկով չի ստացվում:

Միջոցառում 12006. **Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրում**

Ավելացնել հետևյալ չափորոշիչը

- ✓ *Շահառուների թիվն ըստ սեռային տարանջատման*

Միջոցառում 12008. **Գործազուրկների, աշխատանքից ազատման ռիսկ ունեցող, ինչպես նաև ազատազրկման ձևով պատիժը կրելու ավարտին վեց ամիս մնացած աշխատանք փնտրող անձանց կրթաթոշակի տրամադրում**

Ավելացնել հետևյալ չափորոշիչները

- ✓ *Մասնագիտական ուսուցման դասընթացներին մասնակցող գործազուրկների թիվ, մարդ*
- ✓ *Մասնագիտական ուսուցման դասընթացներին մասնակցող աշխատանքից ազատման ռիսկ ունեցող աշխատանք փնտրող անձանց թիվ, մարդ*
- ✓ *Մասնագիտական ուսուցման դասընթացներին մասնակցող ազատազրկման ձևով պատիժը կրելու ավարտին վեց ամիս մնացած աշխատանք փնտրողանձանց թիվ, մարդ*
- ✓ *Դասընթացների մասնակիցների գոհունակության մակարդակը, տոկոս*
- ✓ *Շահառուների թիվն ըստ սեռային տարանջատման*

Միջոցառում 12011. **Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների ժանամակավոր զբաղվածության ապահովում**

Ավելացնել հետևյալ չափորոշիչները

- ✓ *Ծրագրերում գործազուրկների ընդգրկման համապատասխանությունը սահմանված չափանիշներին, տոկոս*
- ✓ *Ծրագրերում ընդգրկված գործազուրկների գոհունակության մակարդակը, տոկոս*

Միաժամանակ, առաջարկում ենք Զբաղվածության ծրագրի համապատասխան պատասխանատուների հետ քննարկել ծրագրի հետևյալ միջոցառումները տրանսֆերտների տրամադրման տեսակից փոխել ծառայությունների մատուցման տեսակի միջոցառումների՝

- 12004.Ձեռք բերած մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու համար գործազուրկներին աջակցության տրամադրում
- 12005.Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին միանվագ փոխհատուցման տրամադրում
- 12010. Աշխատաշուկայում անմրցունակ և մասնագիտություն չունեցող երիտասարդ մայրերի համար գործատուի մոտ մասնագիտական ուսուցման կազմակերպում
- 12011. Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով

գործազուրկների ժանամակավոր զբաղվածության ապահովում

- ***Ծրագիր 1102. Կենսաթոշակային ապահովություն***

Միջոցառում 11004. **Կենսաթոշակային համակարգի հանրային իրազեկման աշխատանքներ**

Ավելացնել հետևյալ չափորոշիչները

- ✓ *Անվճար դասընթացներ կուտակային բաղադրիչի մասնակիցների համար, հատ*
- ✓ *Իրազեկման ծածկույթը ՀՀ տարածքում, տոկոս*

- ***Ծրագիր 1160.Հաշմանդամություն ունեցող անձանց աջակցություն***

Միջոցառում 11001. **Հաշմանդամություն ունեցող անձանց աջակցող միջոցների վերանորոգում**

Ավելացնել հետևյալ չափորոշիչները

- ✓ *Օգտագործման ժամկետում վերանորոգման կարիք ունեցող աջակցող միջոցների տեսակարար կշիռը տրամադրված միջոցների ընդհանուր թվի նկատմամբ, տոկոս*
- ✓ *Օգտագործման ժամկետում կրկնակի վերանորոգման կարիք ունեցող աջակցող միջոցների տեսակարար կշիռը տրամադրված միջոցների ընդհանուր թվի նկատմամբ, տոկոս*
- ✓ *Շահառուների գոհունակության մակարդակը, տոկոս*

Միջոցառում 11006. **Մտավոր և հոգեկան խնդիրներով հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային սոցիալ-վերականգնողական ծառայություններ**

Ավելացնել հետևյալ չափորոշիչները

- ✓ *Ցերեկային սոցիալ-վերականգնողական ծառայություններ մատուցող ոչ պետական կազմակերպությունների թիվ, հատ*
- ✓ *Պետական վկայագրերի միջոցով ցերեկային կենտրոններում սպասարկվող շահառուների թիվ, մարդ*
- ✓ *Մատուցվող սոցիալ-հոգեբանական ծառայությունների համապատասխանությունը շահառուների գնահատված կարիքներին, տոկոս,*
- ✓ *Շահառուների գոհունակության մակարդակը, տոկոս*

Միջոցառում 11007. **Հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային սոցիալ- հոգեբական աջակցություն ցերեկային կենտրոնում**

Ավելացնել հետևյալ չափորոշիչները

- ✓ *Ցերեկային սոցիալ-հոգեբանական աջակցություն տրամադրող ոչ պետական կազմակերպությունների թիվ, հատ*
- ✓ *Պետական վկայագրերի միջոցով ցերեկային կենտրոններում սպասարկվող շահառուների թիվ, մարդ*
- ✓ *Մատուցվող սոցիալ-հոգեբանական ծառայությունների համապատասխանությունը շահառուների գնահատված կարիքներին, տոկոս,*
- ✓ *Շահառուների գոհունակությանմակարդակը, տոկոս*

Միջոցառում 11008. **Աուտիզմ ունեցող անձանց ցերեկային սոցիալ-հոգեբական աջակցություն ցերեկային կենտրոնում**

Ավելացնել հետևյալ չափորոշիչները

- ✓ *Ցերեկային սոցիալ-հոգեբանական աջակցություն տրամադրող ոչ պետական կազմակերպությունների թիվ, հատ*
- ✓ *Պետական վկայագրերի միջոցով ցերեկային կենտրոններում սպասարկվող շահառուների թիվ, մարդ*
- ✓ *Մատուցվող սոցիալ-հոգեբանական ծառայությունների համապատասխանությունը շահառուների գնահատված կարիքներին, տոկոս,*
- ✓ *Շահառուների գոհունակության մակարդակը, տոկոս*

Միջոցառում 11009. **Տեսողության խնդիրներ ունեցող անձանց սոցիալ-հոգեբական վերականգնում**

Ավելացնել հետևյալ չափորոշիչները

- ✓ *Շահառուների համար անցկացվող ուսուցողական սեմինարների քանակը, հատ*
- ✓ *Շահառուներիգոհունակությանմակարդակը, տոկոս*

Միջոցառում 11010. **Մտավոր խնդիրներ ունեցող անձանց շուրջօրյա խնամքի ծառայություններ համայնքահենք փոքր խմբային տներում** (Նախկինում՝ 'Մտավոր խնդիրներ ունեցող անձանց շուրջօրյա խնամքի ծառայություններ', տեղափոխվել է 1032 ծրագրից՝ 11008 միջոցառում)

Ավելացնել հետևյալ չափորոշիչները

- ✓ *Համայնքահենք փոքր խմբային տների թիվ,հատ*
- ✓ *Խմբային տներում սպասարկվող շահառուների թիվը կացարանի և շուրջօրյա խնամքի կարիք ունեցող անձանց ընդհանուր թվում, տոկոս*
- ✓ *Մատուցվող շուրջօրյա խնամքի և սոցիալական վերականգնման ծառայությունների համապատասխանությունը շահառուների գնահատված կարիքներին, տոկոս,*
- ✓ *Շահառուների գոհունակության մակարդակը,տոկոս*

Միջոցառում 11011. **Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց շուրջօրյա խնամքի ծառայություններ համայնքահենք փոքր խմբային տներում** (Նախկինում՝ «Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց շուրջօրյա խնամքի ծառայություններե, տեղափոխվել է 1032 ծրագրից՝ 11009 միջոցառում) Ավելացնել հետևյալ չափորոշիչները

- ✓ *Համայնքահենք փոքր խմբային տների թիվ,հատ*
- ✓ *Խմբային տներում սպասարկվող շահառուների թիվը կացարանի և շոջրջօրյա խնամքի կարիք ունեցող անձանց ընդհանուր թվում, տոկոս*
- ✓ *Մատուցվող շուրջօրյա խնամքի և սոցիալական վերականգնման ծառայությունների համապատասխանությունը շահառուների գնահատված կաիքներին, տոկոս,*
- ✓ *Շահառուների գոհունակության մակարդակը, տոկոս*

Միջոցառում 12001**. Պետական հավաստագրերով աջակցող միջոցների տրամադրում**

Ավելացնել հետևյալ չափորոշիչները

- ✓ *Պետական հավաստագրով աջակցող միջոցների տրամադրող կազմակերպությունների թիվը, հատ*
- ✓ *Աջակցող միջոցների նկատմամբ առկա պահանջարկի բավարարման մակարդակը, տոկոս*
- ✓ *Շահառուների գոհունակության մակարդակը,տոկոս*

- ***Ծրագիր 1141. Ընտանիքներին, կանանց և երեխաներին աջակցություն***

Միջոցառում 11001. **Մինչև 18 տարեկան առանց ծնողական խնամքի մնացած երեխաների շուրջօրյա խնամքի, դաստիարակության, ուսման, ֆիզիկական և մտավոր զարգացմանը նպաստող պայմանների ապահովում, երեխաների իրավունքների և շահերի պաշտպանություն**

Շարադրել միջոցառման նկարագրությունը «**Մինչև 18 տարեկան առանց ծնողական խնամքի մնացած երեխաների շուրջօրյա խնամքի կազմակերպում՝ ապահովելով նրանց դաստիարակությունը, ֆիզիկական և մտավոր զարգացումը, իրավունքների և շահերի պաշտպանությունը և կապը կենսաբանական ընտանիքների հետ**» խմբագրությամբ:

Ավելացնել հետևյալ չափորոշիչը.

- ✓ *Խնամվողների թիվը ըստ սեռային տարանջատման:*

Միջոցառում 11002. **ՀՀ երեխաների շուրջօրյա խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող և հաստատությունում հայտնվելու ռիսկի խմբում գտնվող երեխաներին ընտանիքներ վերադարձնելու և մուտքը հաստատություններ կանխարգելելու ծառայություններ**

Ավելացնել հետևյալ չափորոշիչները.

- ✓ *Խնամվողների թիվը ըստ սեռային տարանջատման,*
- ✓ *Վերամիավորման շրջանում պետական աջակցություն ստացող երեխաների/ընտանիքների թիվ, հատ*
- ✓ *Ընտանիքների հետ վերամիավորված երեխաների մասնաբաժինը, ում վերամիավորվելուց հետո մշտադիտարկում է սոցաշխատողը, տոկոս*
- ✓ *Կենսաբանական ընտանիքների հետ վերամիավորված երեխաների մասնաբաժինը, տոկոս:*

Միջոցառում 11007. **Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին ժամանակավոր խնամքի տրամադրման ծառայություններ.**

Ավելացնել հետևյալ չափորոշիչները.

- ✓ *Ճգնաժամային կենտրոնների թիվ, հատ*
- ✓ *Խնամվողների թիվն ըստ սեռային տարանջատման:*

Միջոցառում 11010. **Թրաֆիքինգի և շահագործման, բռնության ենթարկված անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայություններ**

Ավելացնել հետևյալ չափորոշիչները.

- ✓ *Փաստացի ծառայություն ստացած անձանց և ծառայություն ստանալու իրավունք ունեցող անձանց հարաբերակցությունը, տոկոս*
- ✓ *Ծառայությունների որակի վերաբերյալ դրական կարծիք արտահայտած շահառուների թիվը, տոկոս, այդ թվում*
  կին
  տղամարդ

Միջոցառումների և արդյունքի ցուցանիշների վերաբերյալ ԹԻՀԿ այն առաջարկությունները, որոնք ներառվել են 2021թ. պետական բյուջեի ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության մասում

- ***Ծրագիր 1011. Անապահով սոցիալական խմբերին աջակցություն***

Միջոցառում 12001. **Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ**

Ներառվել են հետևյալ արդյունքի չափորոշիչները.

- ✓ *Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ ստացող ընտանիքների թիվ, հատ, այդ թվում՝*
    - *Ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների թիվ, հատ*
    - *Սոցիալական նպաստ ստացող ընտանիքների թիվ, հատ*

- ***Ծրագիր 1032. Խնամքի ծառայություններ 18 տարեկանից բարձր տարիքի անձանց***

Միջոցառում 11003. **Տարեցներին, հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի ծառայություններ**

Ներառվել են հետևյալ արդյունքի չափորոշիչները.

- ✓ *ՀՀ մարզերի թիվ, որտեղ մատուցվում են ցերեկային խնամքի ծառայություններ, հատ*
- ✓ *Ցերեկային խնամքի ծառայությունների մատուցման ծածկույթը ՀՀ տարածքում, տոկոս*

Միջոցառում 11005. **Անօթևան մարդկանց համար ժամանակավոր օթևանի տրամադրման ծառայություններ**

Մասամբ փոփոխվել է միջոցառման նկարագրությունը: Նախկին շարադրմամբ այն հետևյալն էր «Անօթևան մարդկանց ժամանակավոր կացարանով, կենսաապահովման համար անհրաժեշտ այլ պայմաններով, սոցիալ-հոգեբանական օգնությամբ, առաջնային բժշկական օգնությամբ և խորհրդատվությամբ ապահովում»

Ներառվել են հետևյալ արդյունքի չափորոշիչները, այլ խմբագրությամբ.

- ✓ *Ժամանակավոր կացարանում սպասարկվող անձանց թիվը օթևանի համար դիմած անձանց ընդհանուր թվում (տոկոս)*
- ✓ *Ժամանակավոր կացարանում սպասարկվող անձանց գոհունակության աստիճանը ստացված ծառայություններից (տոկոս):*

Միջոցառում 11007. **Սոցիալական բնակարանային ֆոնդի սպասարկման ծառայությունների տրամադրում**

Ներառվել է հետևյալ արդյունքի չափորոշիչը, խմբագրված

- ✓ *Բնակիչներին տրամադրված սոցիալական ծառայությունների իրենց սոցիալական կարիքներին համապատասխանության վերաբերյալ դրական արձագանք, տոկոս*

Միջոցառում 11010**. Հատուկ խմբերին դասված որոշակի կատեգորիայի անձանց կացարանով ապահովման ծառայություններ**

Ներառվել է հետևյալ արդյունքի չափորոշիչը մի փոքր այլ խմբագրությամբ.

- ✓ *Կացարանի բնակիչներին տրամադրված ծառայությունների իրենց սոցիալական կարիքներին համապատասխանության վերաբերյալ դրական արձագանք (տոկոս):*

- ***Ծրագիր 1068. Ժողովրդագրական իրավիճակի բարելավման ծրագիր***

Միջոցառում 12001**. Մինչև 2 տարեկան երեխայի նպաստ**

Մասամբ ներառվել է հետևյալ արդյունքի չափորոշիչը

- ✓ *գյուղական բնակավայրերում մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ ստացող քաղաքացիների թիվ, մարդ*

Միջոցառում 12003. **Երիտասարդ և երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովման աջակցություն**

Միջոցառման արդյունքի չափորոշիչները ձևակերպվել են հետևյալ խմբագրությամբ՝

- ✓ *Շահառուների թվաքանակ (մարզային բնակավայրերում բնակարան ձեռք բերելու համար միանվագ դրամական աջակցության բաղադրիչ)*
- ✓ *Շահառուների թվաքանակ (Երիտասարդ ընտանիքների համար կանխավճարի ապահովագրության բաղադրիչ)*
- ✓ *Շահառուների թվաքանակ (երեխայի ծննդով պայմանավորված՝ հիփոթեքային վարկ մարող ընտանիքներին դրամական աջակցության բաղադրիչ)*

- ✓ ***Ծրագիր 1082. Սոցիալական աջակցություն անաշխատունակության դեպքում***

Միջոցառում 12002. **Ժամանակավոր անաշխատունակության դեպքում նպաստ**

Միջոցառման անվանումը փոխվել Հավելված 3-ի մաս 2-ում ներկայացված՝ «Մայրության նպաստ» անվանմամբ:

- ***Ծրագիր 1088. Զբաղվածության ծրագիր***

Միջոցառում 11001. **Հաշմանդամություն ունեցող անձանց աջակցող միջոցների վերանորոգում՝ երկու չափորոշիչ**

«***Հաշմանդամություն ունեցող անձանց թիվ, մարդ***» արդյունքի չափորոշիչը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ «***Մասնագիտական ուսուցում անցած հաշմանդամություն ունեցող անձանց թիվ, մարդ***»:

Ներառվել են հետևյալ արդյունքի չափորոշիչները.

- ✓ *Մասնագիտական ուսուցման ծրագրերի համապատասխանությունն աշխատաշուկայում պահանջարկ ունեցող աշխատատեղերին, տոկոս*
- ✓ *Շահառուների գոհունակության մակարդակը, տոկոս*

Միջոցառում 11004. **Աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցության տրամադրում ծրագրի ուսուցման կազմակերպման և խորհրդատվական ծառայություններ**

«***Հաշմանդամություն ունեցող անձանց թիվ, մարդ***» արդյունքի չափորոշիչը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ «***Ուսուցում անցած հաշմանդամություն ունեցող անձանց թիվ, մարդ***»:

Ներառվել են հետևյալ արդյունքի չափորոշիչները.

- ✓ *Ուսուցում անցնելուց հետո ձեռնարկատիրական գործունեություն սկսած շահառուների թիվը ուսուցում անցած շահառուների ընդհանուր թվում, տոկոս*
- ✓ *Շահառուների գոհունակության մակարդակը, տոկոս*

Միջոցառում 11006. **Վարձատրվող հասարակական աշխատանքների իրականացման ապահովում**

Ներառվել են հետևյալ արդյունքի չափորոշիչները.

- ✓ *Հասարակական աշխատանքների ծրագրերում ընդգրկված գործազուրկների թիվ, մարդ, այդ թվում՝*
  - *կին*
  - *տղամարդ*
- ✓ *Շահառուների գոհունակության մակարդակը, տոկոս (խմբագրված)*

Միջոցառում 11007. **Հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողների համար դասընթացների կազմակերպում**

Ներառվել են հետևյալ արդյունքի չափորոշիչները.

- ✓ *Մասնագիտական ուսուցումից հետո մեկ տարվա ընթացքում զբաղվածություն ձեռք բերած անձանց մասնաբաժինը ծրագրերում ընդգրկվածների ընդհանուր թվում, տոկոս (խմբագրված)*
- ✓ *Շահառուների գոհունակության մակարդակը, տոկոս*

Միջոցառում 12001. **Աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցության տրամադրում**

Ներառվել են հետևյալ արդյունքի չափորոշիչները.

- ✓ *Շահառուների գոհունակության մակարդակը, տոկոս*
- ✓ *Ինքնազբաղվածությամբ ապահովված անձանց թիվն ըստ սեռային տարանջատման*

Միջոցառում 12002. **Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին աշխատավարձի մասնակի փոխհատուցում և հաշմանդամություն ունեցող անձին ուղեկցողի համար դրամական օգնության տրամադրում**

Ներառվել է հետևյալ արդյունքի չափորոշիչը, խմբագրված

- ✓ *Աշխատանքի ընդունված աշխատաշուկայում անմրցունակ, հաշմանդամություն ունեցող անձինք, այդ թվում*

Միջոցառում 12003. **Գործազուրկին այլ վայրում աշխատանքի տեղավորման աջակցության տրամադրում**

Ներառվել է հետևյալ արդյունքի չափորոշիչը

- ✓ *Շահառուների թիվն ըստ սեռային տարանջատման*

Միջոցառում 12004. **Ձեռք բերած մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու համար գործազուրկներին աջակցության տրամադրում**

Միջոցառման չափորոշիչները ձևակերպվել հետևյալ խմբագրությամբ՝

- ✓ *Գործատուի մոտ աշխատանքային պրակտիկա անցած գործազուրկների թիվ, մարդ, այդ թվում՝*
  - *կին*
  - *տղամարդ*
- ✓ *Աշխատանքային պրակտիկա անցած հաշմանդամություն ունեցող անձանց թիվ, մարդ*

Ներառվել են հետևյալ արդյունքի չափորոշիչները.

- ✓ *Աշխատանքային պրակտիկայի միջին տևողությունը, ամիս*
- ✓ *Շահառուների գոհունակության մակարդակը, տոկոս*

Միջոցառում 12006**. Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրում**

Ներառվել է հետևյալ արդյունքի չափորոշիչը, խմբագրված.

- ✓ *Ծրագրերում ներառված անձանց թիվ, մարդ (կին, տղամարդ)*

Միջոցառում 12008. **Գործազուրկների, աշխատանքից ազատման ռիսկ ունեցող, ինչպես նաև ազատազրկման ձևով պատիժը կրելու ավարտին վեց ամիս մնացած աշխատանք փնտրող անձանց կրթաթոշակի տրամադրում**

Ներառվել են հետևյալ արդյունքի չափորոշիչները, խմբագրված.

- ✓ *Ծրագրում ընդգրկվածների գոհունակության մակարդակ, տոկոս*
- ✓ *Ծրագրում ընդգրկվածների թիվ, այդ թվում կին*

Միջոցառում 12011. **Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների ժանամակավոր զբաղվածության ապահովում**

Ներառվել է հետևյալ արդյունքի չափորոշիչը, խմբագրված.

- ✓ *Շահառուների գոհունակության մակարդակը, տոկոս*
- ✓ *Ծրագիր 1141. Ընտանիքներին, կանանց և երեխաներին աջակցություն*

Միջոցառում 11001. **Մինչև 18 տարեկան առանց ծնողական խնամքի մնացած երեխաների շուրջօրյա խնամքի, դաստիարակության, ուսման, ֆիզիկական և մտավոր զարգացմանը նպաստող պայմանների ապահովում, երեխաների իրավունքների և շահերի պաշտպանություն**

Միջոցառման նկարագրությունը շարադրվել է «**Մինչև 18 տարեկան առանց ծնողական խնամքի մնացած երեխաների շուրջօրյա խնամքի կազմակերպում՝ ապահովելով նրանց դաստիարակությունը, ֆիզիկական և մտավոր զարգացումը, իրավունքների և շահերի պաշտպանությունը և կապը կենսաբանական ընտանիքների հետ**» խմբագրությամբ:

Ներառվել է հետևյալ արդյունքի չափորոշիչը, խմբագրված.

- ✓ *Բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի և հատուկ /մասնագիտացված հաստատություններում խնամվող երեխաների թիվ, երեխա, այդ թվում՝ տղա, աղջիկ:*

Միջոցառում 11002. **ՀՀ երեխաների շուրջօրյա խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող և հաստատությունում հայտնվելու ռիսկի խմբում գտնվող երեխաներին ընտանիքներ վերադարձնելու և մուտքը հաստատություններ կանխարգելելու ծառայություններ**

Ներառվել են հետևյալ արդյունքի չափորոշիչները, խմբագրված.

- ✓ *Շուրջօրյա հաստատություններ մուտքը կանխարգելված երեխաների թիվ, երեխա, այդ թվում՝ տղա, աղջիկ,*
- ✓ *Կենսաբանական կամ օրինական ներկայացուցչի ընտանիք վերամիավորման որոշում կայացնելու համար գնահատում անցած երեխաների թիվը, երեխա,*
- ✓ *Ընտանիքների հետ վերամիավորված երեխաների մասնաբաժինը, ում վերամիավորելուց հետո մշտադիտարկում է սոցաշխատողը, տոկոս,*
- ✓ *Կենսաբանական ընտանիքների հետ վերամիավորված երեխաների մասնաբաժինը, տոկոս:*

Միջոցառում 11007. **Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին ժամանակավոր խնամքի տրամադրման ծառայություններ.**

Ներառվել են հետևյալ արդյունքի չափորոշիչները.

- ✓ *Ճգնաժամային կենտրոնների թիվ, հատ*
- ✓ *Ժամանակավոր խնամքի հաստատությունում խնամվող երեխաների թիվ, երեխա, աղջիկ, տղա:*

Միջոցառում 11010. **Թրաֆիքինգի և շահագործման, բռնության ենթարկված անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայություններ**

Ներառվել են հետևյալ արդյունքի չափորոշիչները.

- ✓ *Փաստացի ծառայություն ստացած անձանց և ծառայություն ստանալու իրավունք ունեցող անձանց հարաբերակցությունը, տոկոս*
- ✓ *Ծառայությունների որակի վերաբերյալ դրական կարծիք արտահայտած շահառուների թիվը, տոկոս, այդ թվում*
- ✓ *կին տղամարդ*

- ***Ծրագիր 1160. Հաշմանդամություն ունեցող անձանց աջակցություն***

Միջոցառում 11001. **Հաշմանդամություն ունեցող անձանց աջակցող միջոցների վերանորոգում**

Ներառվել են հետևյալ արդյունքի չափորոշիչը, խմբագրված.

- ✓ *Վերանորոգման կարիք ունեցած աջակցող միջոցների տեսակարար կշիռը տրամադրված նույն տեսակի աջակցող միջոցների ընդհանուր թվի նկատմամբ, տոկոս*

Միջոցառում 12001**. Պետական հավաստագրերով աջակցող միջոցների տրամադրում**

Ներառվել են հետևյալ արդյունքի չափորոշիչները.

- ✓ *Պետական հավաստագրով աջակցող միջոցների տրամադրող կազմակերպությունների թիվը, հատ*
- ✓ *Աջակցող միջոցների նկատմամբ առկա պահանջարկի բավարարման մակարդակը, տոկոս:*

2021թ. ՀՀ պետական բյուջեի ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության բյուջետային ծրագրերի՝ ԹԻՀԿ-ի կողմից առաջադրված արդյունքի չափորոշիչների տարեկան կատարողականի վերլուծություն

ՀՀ պետական բյուջեի աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2021թ. մասով տարեկան հաշվետվության նախագծի ուսումնասիրության ընթացքում միջոցառումների արդյունքային ցուցանիշների մասով վեր են հանվել պարզաբանման կարիք ունեցող մի շարք հարցեր: Այդ հարցերը կարելի է պայմանականորեն բաժանել երկու խմբի. ա/ արդյունքի քանակական որոշ չափորոշիչների տարեկան պլանի, տարեկան ճշտված պլանի և փաստի ցուցանիշների համընկնում[6] և բ/ առանց սպառիչ բացատրությունների արդյունքի չափորոշիչների տարեկան պլանի, տարեկան ճշտված պլանի և փաստի ցուցանիշների միջև կան էական (50% և ավելի) տարբերություններ: Ստորև ամփոփ տեսքով ներկայացված են այդպիսի արդյունքի չափորոշիչները:

1. **Արդյունքի քանակական որոշ չափորոշիչների տարեկան պլանի, տարեկան ճշտված պլանի և փաստի ցուցանիշների համընկնում**

- **Ծրագիր 1005 - Պարգևավճարներ և պատվովճարներ**
  Միջոցառում 11001 - **Զոհված՝ հետմահու «Հայաստանի ազգային հերոս» ՀՀ բարձրագույն կոչում ստացած կամ «Մարտական խաչ» շքանշանով պարգևատրված անձի ընտանիքին պարգևավճարի տրամադրման ապահովում**
  «Պարգևավճարներ ստացողների թիվ, ընտանիք» արդյունքի չափորոշիչ

- **Ծրագիր 1011 - Անապահով սոցիալական խմբերին աջակցություն**
  Միջոցառում 11006 – **Աջակցություն մարզերի սոցիալապես անապահով ընտանիքներին**
  «Աջակցություն ստացող շահառուների թվաքանակ» արդյունքի չափորոշիչ

- **Ծրագիր 1032 - Խնամքի ծառայություններ 18 տարեկանից բարձր տարիքի անձանց**

  Միջոցառում 11007 - **Սոցիալական բնակարանային ֆոնդի սպասարկման ծառայություններ**
  Միջոցառման արդյունքի բոլոր չափորոշիչները, բացի «***Բնակիչներին տրամադրված սոցիալական ծառայությունների իրենց սոցիալական կարիքներին համապատասխանության վերաբերյալ դրական արձագանք, տոկոս***» չափորոշիչից:

- Ծրագիր 1088 – **Զբաղվածության ծրագիր**

[6] Այս դեպքում հարց կարող է առաջանալ, թե արդյոք այդպիսի բացարձակ համընկնումը պատահականություն է, գերազանց պլանավորման արդյունք թե թվանկարչություն:

Միջոցառում 11007 - **Հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողների համար դասընթացների կազմակերպում**
Միջոցառման արդյունքի բոլոր չափորոշիչները

- **Ծրագիր 1153 – Սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման ծրագիր**
  Միջոցառում 11001 - **Մեթոդաբանական ձեռնարկների մշակում, հետազոտությունների անցկացում և սոցիալական ապահովության ոլորտի կադրերի վերապատրաստում**
  Միջոցառման արդյունքի բոլոր չափորոշիչները

- **Ծրագիր 1153 – Սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման ծրագիր**
  Միջոցառում 11001 - **Մեթոդաբանական ձեռնարկների մշակում, հետազոտությունների անցկացում և սոցիալական ապահովության ոլորտի կադրերի վերապատրաստում**
  Միջոցառման արդյունքի բոլոր չափորոշիչները

- **Ծրագիր 1153 – Սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման ծրագիր**
  Միջոցառում 11002 - **Մասնագիտական կողմնորոշման, համակարգի մեթոդաբանության ապահովման և կադրերի վերապատրաստման ծառայություններ**
  Միջոցառման արդյունքի բոլոր չափորոշիչները

Բացի նշված չափորոշիչներից, առանձնահատուկ ուշադրության են արժանի այս նույն խմբին պատկանող արդյունքի առանց բացառության բոլոր չափորոշիչները, որոնց տարեկան պլանի, տարեկան ճշտված պլանի և փաստի ցուցանիշները համընկնում են: Ծառայություն ստացած շահառուների գոհունակության աստիճանը ցույց տվող այդ որակական չափորոշիչների բոլոր ցուցանիշները (տարեկան պլանի, տարեկան ճշտված պլանի և փաստի) ամենուրեք հավասար են 100%-ի, որը կասկածներ է առաջացնում, թե արդյոք դրանք իսկապես չափվել են, ով(քեր) է (են) չափել և ինչպես է (են) չափել: Այդ տեղեկատվությունը բացակայում է նաև տարեկան հաշվետվության նկարագրական մասում (տե՛ս ՀՀ ֆինանսների նախարարության 2021թ. տարեկան հաշվետվության https://minfin.am/hy/page/petakan_byujei_hashvetvutyun_2021_t_tarekan էջում տեղադրված «ՀՀ պետական բյուջեի կատարման վերլուծություն» ֆայլը): Նույն խնդիրն է նաև արդյունքի այն չափորոշիչների դեպքում, որոնց միջոցով չափվում է մատուցվող ծառայության կամ ապրանքների համապատասխանությունը որոշակի նվազագույն չափանիշներին: ***Աղյուսակ 1***-ում բերված են արդյունքի այդ չափորոշիչները:

Աղյուսակ 1. Գոհունակության և համապատասխանության աստիճանը ցույց տվող արդյունքի չափորոշիչներ, որոնց տարեկան պլանի, տարեկան ճշտված պլանի և փաստի ցուցանիշները համընկնում են

Ծրագիր	Միջոցառում	Արդյունքի չափորոշիչ
1011 (Անապահով սոցիալական խմբերին աջակցություն)	11003 (Սոցիալական դեպքի վարման ծառայության ձեռք բերում)	Գնահատված կարիքների թիվը տոկոս, տունայցերի նկատմամբ
1032 (Խնամքի ծառայություններ 18 տարեկանից բարձր տարիքի անձանց)	11001(Տարեցների և հաշմանդամություն ունեցող 18 տարին լրացած անձանց շուրջօրյա խնամքի ծառայություններ)	Տարեցների և հաշմանդամություն ունեցող 18 տարին լրացած անձանց տրամադրվող սննդամթերքի չափաքանակների և էներգետիկ արժեքի համապատասխանությունը սահմանված նվազագույն չափորոշիչներին (մոնիտորինգի և գնահատման արդյունքներ), տոկոս
		Տարեցների և հաշմանդամություն ունեցող 18 տարին լրացած անձանց համար անհրաժեշտ ընդհանուր և բնակելի տարածքի համապատասխանությունը սահմանված խնամքի և սպասարկման նվազագույն չափորոշիչներին (մոնիտորինգի և գնահատման արդյունքներ), տոկոս
		Խնամքի ծառայություններ ստացող տարեց և հաշմանդամություն ունեցող անձանց գոհունակության աստիճանը, տոկոս
	11002 (Տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ)	Տնային պայմաններում տարեցների և հաշմանդամների խնամքի տրամադրման և սոցիալական սպասարկման համապատասխանությունը սահմանված նվազագույն չափորոշիչներին (մոնիտորինգի և գնահատման արդյունքներ), տոկոս

		Խնամքի ծառայություններ ստացող տարեց և հաշմանդամություն ունեցող անձանց գոհունակության աստիճանը, տոկոս
	11003 (Տարեցներին, հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի ծառայություններ (սննդի տրամադրման գծով))	Խնամքի ցերեկային խնամքի կենտրոններում տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրվող սննդամթերքի համապատասխանությունը սահմանված չափանիշներին (մոնիտորինգի և գնահատման արդյունքներ), տոկոս
		Խնամքի ծառայություններ ստացող տարեց և հաշմանդամություն ունեցող անձանց գոհունակության աստիճանը, տոկոս
	11004 (Տարեցների և հաշմանդամություն ունեցող 18 տարին լրացած անձանց շուրջօրյա խնամքի ծառայություններ Լոռու մարզում)	Տարեցների և հաշմանդամություն ունեցող 18 տարին լրացած անձանց տրամադրվող սննդամթերքի չափաքանակների և էներգետիկ արժեքի համապատասխանությունը սահմանված նվազագույն չափորոշիչներին (մոնիտորինգի և գնահատման արդյունքներ), տոկոս
		Տարեցների և հաշմանդամների տուն-ինտերնատի գործունեության համար անհրաժեշտ ընդհանուր և բնակելի տարածքի համապատասխանությունը սահմանված խնամքի և սպասարկման նվազագույն չափորոշիչներին (մոնիտորինգի և գնահատման արդյունքներ), տոկոս

		Խնամքի ծառայություններ ստացող տարեց և հաշմանդամություն ունեցող անձանց գոհունակության աստիճանը, տոկոս
	11005 (Անօթևան մարդկանց համար ժամանակավոր օթևանի տրամադրման ծառայություններ)	Անօթևան մարդկանց ժամանակավոր կացարանում տրամադրվող խորհրդատվական, սոցիալ-հոգեբանական, առաջնային բժշկական և բնաիրային օգնության (սննդի, հիգիենայի միջոցների, հագուստի, կոշիկի) տրամադրման ծառայությունների համապատասխանությունը սահմանված չափանիշներին, տոկոս
		Ժամանակավոր կացարանում սպասարկվող անձանց գոհունակության աստիճանը ստացված ծառայություններից (տոկոս)
	11007 (Սոցիալական բնակարանային ֆոնդի սպասարկման ծառայություններ)	Բնակիչներին տրամադրված սոցիալական ծառայությունների իրենց սոցիալական կարիքներին համապատասխանության վերաբերյալ դրական արձագանք, տոկոս
	11010 (Հատուկ խմբերին դասված որոշակի կատեգորիայի անձանց կացարանով ապահովման ծառայություններ)	Կացարանի բնակիչներին տրամադրված ծառայությունների իրենց սոցիալական կարիքներին համապատասխանության վերաբերյալ դրական արձագանք (տոկոս)
	11011 (Տնային խնամքի ծառայություններ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց համար)	Խնամքի ծառայություններ ստացող տարեց և հաշմանդամություն ունեցող անձանց գոհունակության աստիճանը, տոկոս

1088 (Զբաղվածության ծրագիր)	11001 (Գործազուրկների, աշխատանաքից ազատման ռիսկ ունեցող, ինչպես նաև ազատազրկման ձևով պատիժը կրելու ավարտին վեց ամիս մնացած աշխատանք փնտրող անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպում)	Ծրագրերի և շահառուների ՀՀ օրենսդրությամբ ընտրության չափանիշներին համապատասխանությունը, տոկոս
		Մասնագիտական ուսուցման ծրագրերի համապատասխանությունն աշխատաշուկայում պահանջարկ ունեցող աշխատատեղերին, տոկոս
		Շահառուների գոհունակության մակարդակը, տոկոս
	11007 (Հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողների համար դասընթացների կազմակերպում)	Մասնագիտական ուսուցումից հետո մեկ տարվա ընթացքում զբաղվածություն ձեռք բերած անձանց մասնաբաժինը ծրագրերում ընդգրկվածների ընդհանուր թվում, տոկոս
		Շահառուների գոհունակության մակարդակը, տոկոս
	12002 (Աշխատաշուկ. անմրցունակ ազատազրկ վայրերից վերադարձած, հաշմ. ունեցող, ինչպես նաև «հաշմ. ունեցող երեխա» կարգ. ունեցող անձանց աշխատ. տեղավորման դեպքում գործատուին աշխատավարձի մասնակի փոխհ. և հաշմ. ունեցող անձին ուղեկցողի համար դրամական օգնության տրամադրում)	Շահառուների գոհունակության մակարդակը, տոկոս
	12004 (Ձեռք բերած մասնագիտությամբ մասնագիտական	Շահառուների գոհունակության մակարդակը, տոկոս

	աշխատանքային փորձ ձեռք բերելու համար գործազուրկներին աջակցության տրամադրում)	
	12005 (Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին միանվագ փոխհատուցման տրամադրում)	Շահառուների գոհունակության մակարդակը, տոկոս
	12006 (Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրում)	Շահառուների գոհունակության մակարդակը, տոկոս
	12013 (Աշխատաշուկայում անմրցունակ անձանց անասնապահությամբ զբաղվելու համար աջակցության տրամադրում)	Շահառուների գոհունակության մակարդակը, տոկոս
	12015 (Ռազմական դրությամբ պայմանավորված՝ Ադրբեջանի կողմից 2020 թ. սեպտ. 27-ին սանձազերծված պատերազմի հետևանքով տեղահանված և փաստացի ՀՀ-ում գտնվող Արցախի Հանրապետության գործազուրկ քաղաքացիների աշխատանքային փորձ ձեռքբերելու համար	Շահառուների գոհունակության մակարդակը, տոկոս

	աջակցության տրամադրում)	
1141 (Ընտանիքներին, կանանց և երեխաներին աջակցություն)	11009 (Երեխաների և ընտանիքների աջակցության տրամադրման ծառայություններ)	Երեխաների սոցիալական զարգացման անհատական ծրագրերով ապահովվածությունը, տոկոս
	11010 (Թրաֆիքինգի և շահագործման, սեռական բռնության ենթարկված անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայություններ)	Սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայության համապատասխանությունը սահմանված չափորոշիչներին, տոկոս
	11015 (Ընտանիքում բռնության ենթարկված անձանց ապաստարանի ծառայություններ)	Սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայության համապատասխանությունը սահմանված չափորոշիչներին /տոկոս/
	11016 (Ընտանեկան բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոնների ծառայություններ)	Տրամադրված ծառայության համապատասխանությունը սահմանված չափորոշիչներին /տոկոս/
	11018 (Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում)	Երեխաների խնամքի շուրջօրյա հաստատություններ մուտքը կանխարգելված երեխաների թիվը ցերեկային խնամքի հաստատության երեխաների թվաքանակում, տոկոս
	12005 (Մարդկանց թրաֆիքինգի (և/կամ) շահագործման զոհերին միանվագ դրամական փոխհատուցման տրամադրում)	Ծառայությունների որակի վերաբերյալ դրական կարծիք արտահայտած շահառուների թիվը, տոկոս, այդ թվում կին, տղամարդ
	12006 (Ընտանիքում բռնության ենթարկվածների	Ծառայությունների որակի վերաբերյալ դրական կարծիք արտահայտած շահառուների թիվը, տոկոս, այդ թվում

	ժամանակավոր աջակցություն)	կին, տղամարդ
1153 (Սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման ծրագիր)	11001 (Մեթոդաբանական ձեռնարկների մշակում, հետազոտությունների անցկացում և սոցիալական ապահովության ոլորտի կադրերի վերապատրաստում)	Վերապատրաստվողների գոհունակության ինտեգրալ գնահատականը շարունակական դասընթացներից (1-10 միավոր)
1160 (Հաշմանդամություն ունեցող անձանց աջակցություն)	11010 (Մտավոր խնդիրներ ունեցող անձանց շուրջօրյա խնամքի ծառայություններ)	Մտավոր խնդիրներ ունեցող 18 տարին լրացած անձանց տրամադրվող սննդամթերքի չափաքանակների և էներգետիկ արժեքի համապատասխանությունը սահմանված նվազագույն չափորոշիչներին (մոնիտորինգի և գնահատման արդյունքներ), տոկոս
		Մտավոր խնդիրներ ունեցող ունեցող 18 տարին լրացած անձանց բնակության համար անհրաժեշտ ընդհանուր և բնակելի տարածքի համապատասխանությունը սահմանված խնամքի և սպասարկման նվազագույն չափորոշիչներին (մոնիտորինգի և գնահատման արդյունքներ), տոկոս
		Մտավոր խնդիրներ ունեցող 18 տարին լրացած անձանց տրամադրվող հագուստի և անկողնային պարագաների ապահովման համապատասխանությունը սահմանված խնամքի և սպասարկման նվազագույն չափորոշիչներին (մոնիտորինգի և գնահատման արդյունքներ), տոկոս

	11011 (Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց շուրջօրյա խնամքի ծառայություններ)	Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող 18 տարին լրացած անձանց տրամադրվող սննդամթերքի չափաքանակների և էներգետիկ արժեքի համապատասխանությունը սահմանված նվազագույն չափորոշիչներին (մոնիտորինգի և գնահատման արդյունքներ), տոկոս
		Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող 18 տարին լրացած անձանց խնամքի տան գործունեության համար անհրաժեշտ ընդհանուր և բնակելի տարածքի համապատասխանությունը սահմանված խնամքի և սպասարկման նվազագույն չափորոշիչներին (մոնիտորինգի և գնահատման արդյունքներ), տոկոս
		Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող 18 տարին լրացած անձանց տրամադրվող հագուստի և անկողնային պարագաների ապահովման համապատասխանությունը սահմանված խնամքի և սպասարկման նվազագույն չափորոշիչներին (մոնիտորինգի և գնահատման արդյունքներ), տոկոս

2. **Առանց սպառիչ բացատրությունների արդյունքի չափորոշիչների տարեկան պլանի, տարեկան ճշտված պլանի և փաստի ցուցանիշների միջև կան էական (50% և ավելի) տարբերություններ**

- **Ծրագիր 1011 - Անապահով սոցիալական խմբերին աջակցություն**
  Միջոցառում 11002 - **Համայնքային ենթակայության սոցիալական ծառայությունների կողմից սոցիալական աջակցության քաղաքականության իրականացման ապահովում**
  Միջոցառման ֆինանսավորման տարեկան ճշտված պլանը 5.04 անգամ փոքր է տարեկան պլանից:

- **Ծրագիր 1011 - Անապահով սոցիալական խմբերին աջակցություն**
  Միջոցառում 11003 - **Սոցիալական դեպքի վարման ծառայության ձեռք բերում**
  «Տունայցերի թիվ» արդյունքի չափորոշիչի տարեկան ճշտված պլանը 2,55 անգամ փոքր է տարեկան պլանից: Դրա հետևանքով նույն պատկերն է նաև ***«տունայցի արդյունքում սոցիալական ծառայություն ստացած ընտանիքների (անձանց) թիվ»*** ԱՉ-ի դեպքում, որտեղ գերազանցումը կազմում է 6.84 անգամ: Իր հերթին, «տունայցերի թիվ» ԱՉ-ի տարեկան ճշտված պլանը գերազանցում է փաստին 2.09 անգամ, սակայն այս դեպքում բերված է տարբերության բացատրությունը, այն է, տնայցերի գրանցումը էլեկտրոնային եղանակով սկսվել է 2021թ. հուլիսի 20-ից: Այստեղ հարց է առաջանում, թե ինչու հաշվետվության մեջ չեն արտացոլված մինչև նշված ժամկետն իրականացված տնայցերը, որոնք գրանցվել են թղթային եղանակով:

- **Ծրագիր 1011 - Անապահով սոցիալական խմբերին աջակցություն**
  Միջոցառում 11005 – **Սոցիալական շտապ օգնություն**
  «Սոցիալական ծառայություն ստացած շահառուների թիվ, մարդ» ԱՉ-ի տարեկան ճշտված պլանը 4.72 անգամ գերազանցում է փաստին: Բերված բացատրությունն այն է, որ տվյալ միջոցառմանն առնչվող ծառայության մատուցման մրցույթի արդյունքում հաղթողը ճանաչվել է միայն 2021թ հոկտեմբեր ամսին, այսինքն ստացվում է, որ մինչև հոկտեմբեր ամիսը, երբ մրցույթի արդյունքում ի հայտ եկավ ծառայություն մատուցողը, 2021թ.-ին նշված միջոցառումը չի իրականացվել:

- **Ծրագիր 1032 - Խնամքի ծառայություններ 18 տարեկանից բարձր տարիքի անձանց**
  Միջոցառում 12001 - **Սոցիալական բնակարանային ֆոնդի կացարաններում բնակվող միայնակ կենսաթոշակառուներին կոմունալ ծախսերի դիմաց դրամական փոխհատուցում**
  «Սոցիալական բնակարանային ֆոնդի կացարաններում բնակվող միայնակ կենսաթոշակառուների թիվ» ԱՉ-ի տարեկան պլանի ցուցանիշը հավասար է 100-ի, իսկ տարեկան ճշտված պլանի ցուցանիշը՝ 0-ի: Նաև բացակայում է փաստի ցուցանիշը:

- **Ծրագիր 1068 - Ժողովրդագրական վիճակի բարելավում**

Միջոցառում 12003 - **Երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովման աջակցություն**
«Շահառուների թվաքանակ (երեխայի ծննդով պայմանավորված՝ հիփոթեքային վարկ մարող ընտանիքներին դրամական աջակցության բաղադրիչ)» ԱՉ-ի տարեկան ճշտված պլանը 2.48 անգամ գերազանցում է տարեկան պլանին: Իմիջիայլոց, այս միջոցառման մյուս երկու ԱՉ-երի՝ ***«Շահառուների թվաքանակ (մարզային բնակավայրերում բնակարան ձեռք բերելու համար միանվագ դրամական աջակցության բաղադրիչ)»*** և ***«Շահառուների թվաքանակ (Երիտասարդ ընտանիքների համար կանխավճարի ապահովագրության բաղադրիչ)»*** ԱՉ-ի դեպքում ունենք հակառակ պատկերը, այսինքն տարեկան պլանի ցուցանիշն է գերազանցում տարեկան ճշտված պլանի ցուցանիշին:

- **Ծրագիր 1082 - Սոցիալական աջակցություն անաշխատունակության դեպքում**
  Միջոցառում 12001 - **Ժամանակավոր անաշխատունակության դեպքում նպաստ**
  «Ժամանակավոր անաշխատունակության օրերի թիվ, օր» ԱՉ-ի տարեկան ճշտված պլանը 1.99 անգամ գերազանցում է տարեկան պլանին:

- **Ծրագիր 1088 – Զբաղվածության ծրագիր**
  Միջոցառում 11002 - **Աշխատանքի տոնավաճառի կազմակերպում**
  Ինչպես երևում է տարեկան պլանից, 2021 թվականին նախատեսված էր անցկացնել 10 աշխատանքի տոնավաճառ (տե՛ս «***Տոնավաճառների թիվ, հատ***» ԱՉ ցուցանիշն ըստ տարեկան պլանի): Սակայն, ըստ տարեկան ճշտված պլանի, ոչ մի տոնավաճառ չի անցկացվել և որևէ տեղ չի նշված դրանց չանցկացնելու պատճառը: Լրիվ նույն իրավիճակն է նաև նույն ծրագրի 11004 (**Աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցության տրամադրում ծրագրի ուսուցման կազմակերպման և խորհրդատվական ծառայություններ**), 11006 (**Վարձատրվող հասարակական աշխատանքների իրականացման ապահովում**), 12001 (**Աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցության տրամադրում**), 12003 (**Գործազուրկին այլ վայրում աշխատանքի տեղավորման աջակցության տրամադրում**), 12011 (**Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովում**) միջոցառումների դեպքում:

Բացի այդ վեր են հանվել նաև այլ թերություններ (միջոցառման անվանումը և նկարագրությունը համընկնում են, բացակայում են արդյունքի չափորոշիչները, բացակայում են արդյունքի չափորոշիչների բոլոր կամ մի քանի ցուցանիշները և այլն), որոնք ներկայացված են ստորև: Հարկ է նշել, որ, ամենայն հավանականությամբ, վեր հանված այդ թերություններն առկա էին հենց 2021թ. ընդունված պետական բյուջեում:

- **Ծրագիր 1005 - Պարգևավճարներ և պատվովճարներ**

Միջոցառում 12004 - **Հայրենական մեծ պատերազմի վետերաններին այլ դրամական հատկացումներ**

Միջոցառման անվանումը և նկարագրությունը համընկնում են:

- **Ծրագիր 1011 - Անապահով սոցիալական խմբերին աջակցություն**

  Միջոցառում 11002 - **Համայնքային ենթակայության սոցիալական ծառայությունների կողմից սոցիալական աջակցության քաղաքականության իրականացման ապահովում**

  Միջոցառման անվանումը և նկարագրությունը համընկնում են:
  Բացակայում են արդյունքի չափորոշիչները:

- **Ծրագիր 1032 - Խնամքի ծառայություններ 18 տարեկանից բարձր տարիքի անձանց**

  Միջոցառում 11014 - **Շենքային պայմանների բարելավման նպատակով շինարարական նյութերի ձեռքբերում**

  Միջոցառման անվանումը և նկարագրությունը համընկնում են:
  Բացակայում են արդյունքի չափորոշիչները:

- **Ծրագիր 1068 - Ժողովրդագրական վիճակի բարելավում**

  Միջոցառում 12001 - **Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի տրամադրում**

  Միջոցառման անվանումը և նկարագրությունը համընկնում են:

- **Ծրագիր 1088 – Զբաղվածության ծրագիր**

  Միջոցառում 11001 - **Գործազուրկների, աշխատանաքից ազատման ռիսկ ունեցող, ինչպես նաև ազատազրկման ձևով պատիժը կրելու ավարտին վեց ամիս մնացած աշխատանք փնտրող անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպում**

  Միջոցառման անվանումը և նկարագրությունը համընկնում են:

- **Ծրագիր 1117 – Սոցիալական պաշտպանության բնագավառում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիթորինգ**

  Միջոցառում 11001 - **Սոցիալական պաշտպանության բնագավառի պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիթորինգի ծառայություններ**

  Միջոցառման անվանումը և նկարագրությունը համընկնում են:
  Բացակայում են արդյունքի չափորոշիչները:

- **Ծրագիր 1117 – Սոցիալական պաշտպանության բնագավառում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիթորինգ**

  Միջոցառում 11002 - **Սոցիալական պաշտպանության առանձին ծրագրերի իրականացման ապահովում**

Բացակայում են արդյունքի չափորոշիչները:

- **Ծրագիր 1160 – Հաշմանդամություն ունեցող անձանց աջակցություն**

  Միջոցառում 11006 - **Մտավոր և հոգեկան խնդիրներով հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային սոցիալ-վերականգնողական ծառայություններ**

  Միջոցառման շահառուների ընդհանուր թիվն ըստ տարեկան պլանի և ըստ տարեկան ճշտված պլանի ավելի փոքր է (130), քան ըստ այդ նույն ցուցանիշների կանանց (75) և տղամարդկանց (75) թվերի գումարը:

- **Ծրագիր 1205 - Սոցիալական ապահովություն**

  Միջոցառում 12004 - **Աջակցություն հաշմանդամ դարձած զինծառայողներին և զոհվածների ընտանիքներին**

  Բացակայում են արդյունքի միակ չափորոշիչի («***Միանվագ սոցիալական ապահովագրության վճարներ ստացող ընտանիքների թվաքանակը, հատ***») բոլոր ցուցանիշները: Նույնն է նաև նույն ծրագրի 12005 միջոցառման («**Աջակցություն զոհվածների ընտանիքներին**») արդյունքի միակ ցուցանիշի («***Փոխհատուցում ստացող ընտանիքների թվաքանակ, հատ***») դեպքերում:

- **Ծրագիր 1205 - Սոցիալական ապահովություն**

  Միջոցառում 12009 - **Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցում**

  Միջոցառման անվանումը և նկարագրությունը համընկնում են
  Բացակայում են արդյունքի չափորոշիչները:

- **Ծրագիր 1205 - Սոցիալական ապահովություն**

  Միջոցառում 12012 - **ՀՀ ՊՆ զինվորական կոչում ունեցող անձնակազմին սոցիալական աջակցություն**

  Բացակայում են արդյունքի չափորոշիչները:
  Նույնն է նաև նույն ծրագրի 12014 միջոցառման ***(Ռազմական դրությամբ պայմանավորված դրամական աջակցություն վնասվածք կամ խեղում ստացած զինծառայողներին)*** և 12018 միջոցառման (**Ռազմական դրությամբ պայմանավորված՝ դրամական աջակցություն անհայտ կորած զինծառայողների ընտանիքներին**) դեպքերում***:***

Միջոցառումների և արդյունքի ցուցանիշների վերաբերյալ ԹԻՀԿ այն առաջարկությունները, որոնք չեն ընդգրկվել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2022թ. ընդունված պետական բյուջեում և/կամ 2023թ. բյուջեի հայտում

Առաջարկված արդյունքային ցուցանիշների մի մասը, որոնք ընդգրկվել են 2021 թ. պետական բյուջեում դուրս են մնացել են 2022թ. պետական բյուջեից և 2023թ բյուջետային հայտից, սակայն 2022թ. բյուջեում չընդգրկված ցուցանիշներից որոշներն ընդգրկվել են 2023թ. բյուջետային հայտում:

- ***Ծրագիր 1011. Անապահով սոցիալական խմբերին աջակցություն***

Միջոցառում 12001**. Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ**

Ներառվել են հետևյալ արդյունքի չափորոշիչները.

- ✓ *Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ ստացող ընտանիքների թիվ*, հատ, այդ թվում՝

Չեն ներառվել չափորոշիչի ենթաչափորոշիչները՝

- ✓ *Ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների թիվ, հատ*
- ✓ *Սոցիալական նպաստ ստացող ընտանիքների թիվ, հատ*

- ***Ծրագիր 1032. Խնամքի ծառայություններ 18 տարեկանից բարձր տարիքի անձանց***

Միջոցառում 11003**. Տարեցներին, հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի ծառայություններ**

Չեն ներառվել հետևյալ արդյունքի չափորոշիչները.

- ✓ *ՀՀ մարզերի թիվ, որտեղ մատուցվում են ցերեկային խնամքի ծառայություններ, հատ*
- ✓ *Ցերեկային խնամքի ծառայությունների մատուցման ծածկույթը ՀՀ տարածքում, տոկոս*

Միջոցառում 11005. **Անօթևան մարդկանց համար ժամանակավոր օթևանի տրամադրման ծառայություններ**

Չեն ներառվել են հետևյալ արդյունքի չափորոշիչները, այլ խմբագրությամբ.

- ✓ *Ժամանակավոր կացարանում սպասարկվող անձանց թիվը օթևանի համար դիմած անձանց ընդհանուր թվում (տոկոս)*
- ✓ *Ժամանակավոր կացարանում սպասարկվող անձանց գոհունակության աստիճանը ստացված ծառայություններից (տոկոս):*

Միջոցառում 11007. **Սոցիալական բնակարանային ֆոնդի սպասարկման ծառայությունների տրամադրում**

Չի ներառվել հետևյալ արդյունքի չափորոշիչը, խմբագրված

- ✓ *Բնակիչներին տրամադրված սոցիալական ծառայությունների իրենց սոցիալական կարիքներին համապատասխանության վերաբերյալ դրական արձագանք, տոկոս*

Միջոցառում 11010. **Հատուկ խմբերին դասված որոշակի կատեգորիայի անձանց կացարանով ապահովման ծառայություններ**

Ներառվել է հետևյալ արդյունքի չափորոշիչը մի փոքր այլ խմբագրությամբ.

- ✓ *Կացարանի բնակիչներին տրամադրված ծառայությունների իրենց սոցիալական կարիքներին համապատասխանության վերաբերյալ դրական արձագանք (տոկոս):*

- ***Ծրագիր 1068. Ժողովրդագրական իրավիճակի բարելավման ծրագիր***

Միջոցառում 12001. **Մինչև 2 տարեկան երեխայի նպաստ**

Չի ներառվել հետևյալ արդյունքի չափորոշիչը

- ✓ *գյուղական բնակավայրերում մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ ստացող քաղաքացիների թիվ, մարդ*

Միջոցառում 12003. **Երիտասարդ և երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովման աջակցություն**

Միջոցառման արդյունքի չափորոշիչները ձևակերպվել են հետևյալ խմբագրությամբ՝

- ✓ *Շահառուների թվաքանակ (մարզային բնակավայրերում բնակարան ձեռք բերելու համար միանվագ դրամական աջակցության բաղադրիչ)*
- ✓ *Շահառուների թվաքանակ (Երիտասարդ ընտանիքների համար կանխավճարի ապահովագրության բաղադրիչ)*
- ✓ *Շահառուների թվաքանակ (երեխայի ծննդով պայմանավորված՝ հիփոթեքային վարկ մարող ընտանիքներին դրամական աջակցության բաղադրիչ)*

- ***Ծրագիր 1082. Սոցիալական աջակցություն անաշխատունակության դեպքում***

Միջոցառում 12002**. Ժամանակավոր անաշխատունակության դեպքում նպաստ**

Միջոցառման անվանումը փոխվել Հավելված 3-ի մաս 2-ում ներկայացված՝ «**Մայրության նպաստ**» անվանմամբ:

- ***Ծրագիր 1088. Զբաղվածության ծրագիր***

Միջոցառում 11001. **Գործազուրկների՝ աշխատանքից ազատման ռիսկ ունեցող, ինչպես նաև ազատազրկման ձևով պատիժը կրելու ավարտին վեց ամիս մնացած աշխատանք փնտրող անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպում**

Տվյալ չափորոշիչը ներառվել է 2023 թ բյուջետային հայտում սակայն բացակայում է 2022թ. պետական բյուջեում

«***Հաշմանդամություն ունեցող անձանց թիվ, մարդ***» արդյունքի չափորոշիչը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ «***Մասնագիտական ուսուցում անցած հաշմանդամություն ունեցող անձանց թիվ, մարդ***»:

Չեն ներառվել հետևյալ արդյունքի չափորոշիչները.

- ✓ *Մասնագիտական ուսուցման ծրագրերի համապատասխանությունն աշխատաշուկայում պահանջարկ ունեցող աշխատատեղերին, տոկոս*
- ✓ *Շահառուների գոհունակության մակարդակը, տոկոս*

Միջոցառում 11004. **Աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցության տրամադրում ծրագրի ուսուցման կազմակերպման և խորհրդատվական ծառայություններ**

«***Հաշմանդամություն ունեցող անձանց թիվ, մարդ***» արդյունքի չափորոշիչը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ «***Ուսուցում անցած հաշմանդամություն ունեցող անձանց թիվ, մարդ***»:

Ներառվել են հետևյալ արդյունքի չափորոշիչները.

- ✓ *Ուսուցում անցնելուց հետո ձեռնարկատիրական գործունեություն սկսած շահառուների թիվը ուսուցում անցած շահառուների ընդհանուր թվում, տոկոս*
- ✓ *Շահառուների գոհունակության մակարդակը, տոկոս*

Միջոցառում 11006. **Վարձատրվող հասարակական աշխատանքների իրականացման ապահովում**

Հետևյալ արդյունքի չափորոշիչները ներառվել են 2023 թ. բյուջետային հայտում , սակայն նրանցից առաջինը բացակայում է 2022թ պետական բյուջեում.

- ✓ *Հասարակական աշխատանքների ծրագրերում ընդգրկված գործազուրկների թիվ, մարդ, այդ թվում՝*
  կին
  տղամարդ
- ✓ *Շահառուների գոհունակության մակարդակը, տոկոս (խմբագրված)*

Միջոցառում 11007. **Հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողների համար դասընթացների կազմակերպում**

Հետևյալ արդյունքի չափորոշիչները ներառվել են 2023 թ. բյուջետային հայտում , սակայն նրանցից երկրորդը բացակայում է 2022թ պետական բյուջեում.

- ✓ *Մասնագիտական ուսուցումից հետո մեկ տարվա ընթացքում զբաղվածություն ձեռք բերած անձանց մասնաբաժինը ծրագրերում ընդգրկվածների ընդհանուր թվում, տոկոս (խմբագրված)*
- ✓ *Շահառուների գոհունակության մակարդակը, տոկոս*

Միջոցառում 12001. **Աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցության տրամադրում**

Ներառվել են հետևյալ արդյունքի չափորոշիչները.

- ✓ *Շահառուների գոհունակության մակարդակը, տոկոս*
- ✓ *Ինքնազբաղվածությամբ ապահովված անձանց թիվն ըստ սեռային տարանջատման*

Միջոցառում 12002. **Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին աշխատավարձի մասնակի փոխհատուցում և հաշմանդամություն ունեցող անձին ուղեկցողի համար դրամական օգնության տրամադրում**

Ներառվել է հետևյալ արդյունքի չափորոշիչը, խմբագրված

- ✓ *Աշխատանքի ընդունված աշխատաշուկայում անմրցունակ, հաշմանդամություն ունեցող անձինք, այդ թվում*

Միջոցառում 12003. **Գործազուրկին այլ վայրում աշխատանքի տեղավորման աջակցության տրամադրում**

Հետևյալ արդյունքի չափորոշիչը ներառվել է 2023 թ. բյուջեի հայտում , սակայն բացակայում է 2022թ պետական բյուջեում.

- ✓ *Շահառուների թիվն ըստ սեռային տարանջատման*

Միջոցառում 12004. **Ձեռք բերած մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու համար գործազուրկներին աջակցության տրամադրում**

Հետևյալ խմբագրությամբ փոխարինված արդյունքի չափորոշիչները ներառվել են 2023 թ. բյուջեի հայտում , սակայն բացակայում են 2022թ պետական բյուջեում.

- ✓ *Գործատուի մոտ աշխատանքային պրակտիկա անցած գործազուրկների թիվ, մարդ, այդ թվում՝*
  կին
  տղամարդ
- ✓ *Աշխատանքային պրակտիկա անցած հաշմանդամություն ունեցող անձանց թիվ, մարդ*

Ներառվել են հետևյալ արդյունքի չափորոշիչները.

- ✓ *Աշխատանքային պրակտիկայի միջին տևողությունը, ամիս*
- ✓ *Շահառուների գոհունակության մակարդակը, տոկոս*

Միջոցառում 12006**. Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրում**

Ներառվել է հետևյալ արդյունքի չափորոշիչը, խմբագրված.

- ✓ *Ծրագրերում ներառված անձանց թիվ, մարդ (կին, տղամարդ)*

Միջոցառում 12008. **Գործազուրկների, աշխատանքից ազատման ռիսկ ունեցող, ինչպես նաև ազատազրկման ձևով պատիժը կրելու ավարտին վեց ամիս մնացած աշխատանք փնտրող անձանց կրթաթոշակի տրամադրում**

Ներառվել են հետևյալ արդյունքի չափորոշիչները, խմբագրված.

- *Ծրագրում ընդգրկվածների գոհունակության մակարդակ, տոկոս*
- *Ծրագրում ընդգրկվածների թիվ, այդ թվում*
  կին
  տղամարդ

Միջոցառում 12011. **Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովում**

Ներառվել է հետևյալ արդյունքի չափորոշիչը, խմբագրված.

- ✓ *Շահառուների գոհունակության մակարդակը, տոկոս*
- ***Ծրագիր 1141. Ընտանիքներին, կանանց և երեխաներին աջակցություն***

Միջոցառում 11001. Մինչև 18 տարեկան առանց ծնողական խնամքի մնացած երեխաների շուրջօրյա խնամքի, դաստիարակության, ուսման, ֆիզիկական և մտավոր զարգացմանը նպաստող պայմանների ապահովում, երեխաների իրավունքների և շահերի պաշտպանություն

Միջոցառման նկարագրությունը շարադրվել է «**Մինչև 18 տարեկան առանց ծնողական խնամքի մնացած երեխաների շուրջօրյա խնամքի կազմակերպում՝ ապահովելով նրանց դաստիարակությունը, ֆիզիկական և մտավոր զարգացումը, իրավունքների և շահերի պաշտպանությունը և կապը կենսաբանական ընտանիքների հետ**» խմբագրությամբ:

Ներառվել է հետևյալ արդյունքի չափորոշիչը, խմբագրված.

- ✓ *Բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի և հատուկ/մասնագիտացված հաստատություններում խնամվող երեխաների թիվ, երեխա, այդ թվում՝ տղա, աղջիկ:*

Միջոցառում 11002. **ՀՀ երեխաների շուրջօրյա խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող և հաստատությունում հայտնվելու ռիսկի խմբում գտնվող երեխաներին ընտանիքներ վերադարձնելու և մուտքը հաստատություններ կանխարգելելու ծառայություններ**

Ներառվել են հետևյալ արդյունքի չափորոշիչները, խմբագրված.

- ✓ *Շուրջօրյա հաստատություններ մուտքը կանխարգելված երեխաների թիվ, երեխա, այդ թվում՝ տղա, աղջիկ,*
- ✓ *Կենսաբանական կամ օրինական ներկայացուցչի ընտանիք վերամիավորման որոշում կայացնելու համար գնահատում անցած երեխաների թիվը, երեխա,*
- ✓ *Ընտանիքների հետ վերամիավորված երեխաների մասնաբաժինը, ում վերամիավորելուց հետո մշտադիտարկում է սոց աշխատողը, տոկոս,*

- ✓ *Կենսաբանական ընտանիքների հետ վերամիավորված երեխաների մասնաբաժինը, տոկոս:*

Միջոցառում 11007. **Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին ժամանակավոր խնամքի տրամադրման ծառայություններ.**

Ներառվել են հետևյալ արդյունքի չափորոշիչները.

- ✓ *Ճգնաժամային կենտրոնների թիվ, հատ*
- ✓ *Ժամանակավոր խնամքի հաստատությունում խնամվող երեխաների թիվ, երեխա, աղջիկ, տղա:*

Միջոցառում 11010**. Թրաֆիքինգի և շահագործման, բռնության ենթարկված անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայություններ**

Հետևյալ արդյունքի չափորոշիչները նեռարվել են 2023թ. բյուջետային հայտում, սակայն բացակայում են 2022թ. պետական բյուջեում

- ✓ *Փաստացի ծառայություն ստացած անձանց և ծառայություն ստանալու իրավունք ունեցող անձանց հարաբերակցությունը, տոկոս*
- ✓ *Ծառայությունների որակի վերաբերյալ դրական կարծիք արտահայտած շահառուների թիվը, տոկոս, այդ թվում*
- ✓ *կին տղամարդ*
- ***Ծրագիր 1160.*** **Հաշմանդամություն ունեցող անձանց աջակցություն**

Միջոցառում 11001. **Հաշմանդամություն ունեցող անձանց աջակցող միջոցների վերանորոգում՝ երկու չափորոշիչ**

Չի ներառվել հետևյալ արդյունքի չափորոշիչը.

- ✓ *Վերանորոգման կարիք ունեցած աջակցող միջոցների տեսակարար կշիռը տրամադրված նույն տեսակի աջակցող միջոցների ընդհանուր թվի նկատմամբ, տոկոս*

Միջոցառում 12001**. Պետական հավաստագրերով աջակցող միջոցների տրամադրում**

Հետևյալ արդյունքի չափորոշիչները չեն ներառվել են 2022 թ. բյուջեում, սակայն նրանցից առաջինը ներառվել է 2023թ բյուջեի հայտում.

- ✓ *Պետական հավաստագրով աջակցող միջոցների տրամադրող կազմակերպությունների թիվը, հատ*
- ✓ *Աջակցող միջոցների նկատմամբ առկա պահանջարկի բավարարման մակարդակը, տոկոս:*

Եզրակացություններ և առաջարկություններ

Սույն ծրագրի իրականացման արդյունքում արված եզրակացությունները և առաջարկությունները ներկայացնելիս պետք է հաշվի առնել այն, որ ծրագրի հիմնական մասը (2020թ. փետրվարի 1-ից մինչև 2021թ. հունվարի 31-ը) իրականացվել է երկրի համար ճգնաժամային պայմաններում: Դա, նախ, կորոնավիրուսի համավարակն էր, որը Հայաստանում սկսվեց 2020թ. մարտի 1-ից և փաստացի շարունակվեց մինչև ծրագրի ավարտը՝ 2022թ. ապրիլի 29-ը: Երկրորդ ճգնաժամը, որը նույնպես էապես ազդեց ծրագրի իրականացման վրա (տե՛ս դրա մասին նաև սույն հրապարակման Ներածության բաժնում), դա 2020թ. սեպտեմբերի 27-ին սկսված Ադրբեջանի կողմից Արցախի դեմ սանձազերծված ագրեսիան էր՝ 44-օրյա պատերազմը: Այդ ճգնաժամերը հանգեցրին դեռևս մինչ այդ (2020թ. մարտի 16-ը) մշակված բյուջետային հայտերի էական վերանայմանը՝ հատկացնելու համար զգալի միջոցներ համավարակի և պատերազմի հետևանքների վերացմանը, ինչպես նաև, հաշվի առնելով պատերազմի ընթացքում և դրանից հետո ստեղծված բարդ ներքաղաքական իրավիճակը, թույլ չտվեցին լիարժեք կերպով իրականացնել ջատագովության աշխատանքներ՝ ուղղված մշակված առաջարկությունների ընդունմանը:

Ա. Եզրակացություններ

- 2020թ. փետրվար-մարտ ամիսներին ծրագրի փորձագետների կողմից ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմին ցույց տրված աջակցությունը նախարարության 2021թ. բյուջետային հայտի կազմման գործում ցույց տվեց, որ նախարարության կողմից ողջունվում է այդպիսի օժանդակությունը: Իրականացված համատեղ աշխատանքը տվեց դրական արդյունք՝ ծրագրի փորձագետների կողմից առաջարկված միջոցառումների և դրանց արդյունքի չափորոշիչների զգալի մասը տեղ գտավ նախարարության բյուջետային հայտում: Միևնույն ժամանակ, 2021թ. ընդունված պետական բյուջեի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ և՛ միջոցառումների, և՛ դրանց արդյունքի չափորոշիչների ձևակերպման մեջ դեռ առկա են թերություններ: Օրինակ, հաճախ են հանդիպում դեպքեր, երբ միջոցառման անվանումը և նկարագրությունը համընկնում են, կամ առկա են միջոցառումներ, որոնք անհասկանալի կերպով չունեն արդյունքի չափորոշիչներ:
- ԱԺ-ում 2021թ. պետական բյուջեի նախագծի քննարկումը և այդ քննարկման ժամանակ ծրագրի իրականացման արդյունքում մշակված առաջարկությունների ջատագովությունը (2020թ. հոկտեմբեր-դեկտեմբեր) ցույց տվեց, որ ԱԺ պատգամավորների ճնշող մեծամասնությունը այն ժամանակ դեռևս չէր ըմբռնում ծրագրային բյուջետավորման էությունը և կարևորությունը: Այստեղ, իհարկե, չպետք է մոռանալ նշված ժամանակահատվածում Հայաստանում կատարվող իրադարձությունները: Սակայն, բարեբախտաբար, չնայած դրան, ԹԻՀԿ-ին հաջողվեց իր առաջարկությունների մի մասը ներառել 2021թ. ընդունված պետական բյուջեում:
- Պետական բյուջեի 2021թ. կատարման հաշվետվության ուսումնասիրությունը ցույց տվեց, որ արդյունքի չափորոշիչների կատարողականում առկա են թերություններ

(սակայն ավելի քիչ, քան դրա նախորդող տարվա կատարման հաշվետվության մեջ), որոնք, ինչպես արդեն նշվել է, ամենայն հավանականությամբ առկա էին 2021թ. ընդունված պետական բյուջեում: Արդյունքի չափորոշիչների կապակցությամբ ի հայտ եկան պարզաբանման կարիք ունեցող հարցեր, ինչպիսիք են, օրինակ, արդյունքի մի շարք չափորոշիչների տարեկան պլանի կամ տարեկան ճշտված պլանի և փաստի ցուցանիշների միջև չափազանց մեծ, անբացատրելի տարբերությունները: Պարզաբանման կարիք ունի նաև մյուս ծայրահեղությունը, երբ նշված ցուցանիշները (տարեկան պլան և փաստ, կամ տարեկան ճշտված պլան և փաստ) լրիվ համընկնում են: Վերջինը, մանավանդ ակնառու է գոհունակության աստիճանը և համապատասխանության աստիճանը չափող արդյունքի չափորոշիչների դեպքում, ընդ որում երբ դրանք հավասար են 100%-ի:

- Պարզաբանման կարիք ունի նաև այն հարցը, թե ինչու ԹԻՀԿ առաջարկած միջացառումները և արդյունքի չափորոշիչները, որոնք ներառվել էին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի 2021թ. ընդունված բյուջեում, չեն ներառվել նրա 2022թ. ընդունված բյուջեում կամ 2023թ. բյուջեի հայտում: Ընդ որում, որոշ դեպքերում, 2022թ. բյուջեում չներառված արդյունքի չափորոշիչներն այնուհետև նորից ներառվել են 2023թ. բյուջեի հայտում:

Բ. Առաջարկություններ

- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության բյուջեի հայտի մշակման հարցում նախարարության հետ համագործակցության ԹԻՀԿ-ի փորձը ցույց է տալիս, որ անհրաժեշտ է ավելի մասնակցային դարձնել պետական բյուջեի մշակման գործընթացը՝ ներգրավելով հասարակական կազմակերպություններին լրատվամիջոցներին, գործարար շրջանակների շահերը ներկայացնող կազմակերպություններին և քաղաքացիական հասարակության այլ կառույցներին:
- Պատգամավորների բյուջետային գրագիտությունը բարձրացնելու միջոցով պետք է նպատակասլաց կերպով ուժեղացնել ԱԺ-ի վերահսկիչ գործառույթները բյուջետային ցիկլի բոլոր փուլերում:
- Անհրաժեշտ է շարունակել հետևողական ջանքերը՝ ստեղծելու ոչ միայն ձևով, այլև բովանդակությամբ ծրագրային պետական բյուջե:
- Պետք է ուշադրությունը կենտրոնացնել արդյունքի որակական այնպիսի չափորոշիչներ մշակելու վրա, որոնք կլինեն բովանդակային, և, ամենակարևորը, դրանք հնարավոր կլինի չափել: